«ԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

2013 թ.սեպտեմբերի 28 - հոկտեմբերի 5
Կարս, Թուրքիա

«ԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ» ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ

2013 թ.սեպտեմբերի 28 - հոկտեմբերի 5
Կարս, Թուրքիա

WORLD MONUMENTS FUND

NIKU
Norwegian Institute for Cultural Heritage Research

ANADOLU KÜLTÜR

«Անին համապետքսպում» աշխատաժողովի մասնակիցները — դիմացի շարքում՝ ձախից աջ. Քրիստինա Մարանչի, Ռեյչել Գոշգարիան, Մարիամ Ջողիրիեռաժեյե, Դույգու Էրքան, Յավուզ Օզկայա, Արմեն Ղազարյան, ետևի շարքում՝ Դավիթ Քերթմենջյան, Ֆիլիպ Դանգլս, Ստեֆեն Ջեյ Քելլի, Ֆելիքս Տեր-Մարտիրոսով, Գիզեմ Դորթեր, Կարեն Մաթևոսյան, Սամանտա Էրլ, Ալին Պոնտիոլու, Ջոհաննես Պալուդան-Մուլե, Կարսթեն Պալուդան-Մուլե, Մարկ Վեբեր, Ռեգին Լիֆե Մայեր, Աշոտ Մանասյան, Օմեր Կարայագլի, Պրեդրագ Գավրիլովիչ:

Հեղինակային իրավունքները՝ Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի ©2014

Հասցեն՝ 350 Fifth Avenue, Suite 2412
New York, New York 10118
ISBN-10: 0-9858943-6-9
ISBN-13: 978-0-9858943-6-8

Սույն զեկույցն ամբողջությամբ կարող է ազատորեն շրջանառվել, սակայն բովանդակությունը չի կարող մասնակիորեն կամ ամբողջական ձևով վերարտադրվել առանց Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի հատուկ թույլտվության

Բովանդակություն

4 Նախաբան
6 Կատարողական ամփոփում
8 Ռիսկերի գնահատման թվացանց (մատրից)
9 «Անին համատեքստում». ներածություն և առաջնահերթ վայրեր
10 Մրենի տաճար
11 Խծկոնքի վանք
11 Հոռոմոսի վանք
12 Տիգնիսի բերդ
13 Հետազոտված վայրերի քարտեզ
14 Ռիսկերի գնահատման թվացանց. խումբ 1
14 Հոռոմոս
15 Մրեն
16 Խծկոնք
17 Տիգնիս
18 Կարմիրվանք
19 Տայլար
20 Մաղասբերդ
21 Ռիսկերի գնահատման թվացանց. խումբ 2
21 Բագնայր
22 Ուղուզլու (Օղուզլու)
23 Կարմիր վանք
24 Բուլանըխ
25 Նախիջևան
26 Ուզուն եկեղեցի
27 Տեկոր
28 Երազգավորս
29 Հովվի եկեղեցի և բաղնիքներ
30 Ռիսկերի գնահատման թվացանց. խումբ 3
30 Ծպնի
31 Բագարան
32 Արգինա
33 Արջո Առիճ
34 Ալաման
35 Ագարակ
36 Մատենագիտություն և գրականություն
37 Հավելված Ա. Խծկոնքի վանքի գնահատում
37 Պատկանելություն և հասանելիություն
38 Պատմություն և նկարագրություն
39 Ճարտարապետական գնահատում
41 Կառուցվածքային գնահատում
43 Լրացուցիչ ուսումնասիրություններ
44 Դիտարկումներ զբոսաշրջության ներուժի և համայնքի վերաբերյալ
45 Առաջարկություններ
46 Հավելված Բ. Աշխատաժողովի ծրագիրը և մասնակիցները

Նախաբան

2013 թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 5-ը Թուրքիայի Կարս նահանգում հրավիրվել էր «Անին համատեքստում» խորագրով միջազգային աշխատաժողով, որի անցկացումը պայմանավորված էր Անիի նկատմամբ հետաքրքրության աճով, 2012 թ. Թուրքիայի կառավարության նախաձեռնությամբ միջնադարյան պարսպապատ քաղաքը Համաշխարհային ժառանգության նախնական ցանկում ընդգրկելու նպատակով:

Աշխատաժողովի նպատակն էր ընդլայնել դիտարկման շրջանակը՝ ընդգրկելով Անիին առնչվող տարածաշրջանի մշակութային ժառանգության կարևորագույն այլ վայրերը, և գնահատել առկա վիճակը, ինչպես նաև՝ հետազոտված վայրերի կարևորությունն ու պահպանման ներուժը:

Հավաքվեց փորձագիտական մի խումբ՝ Թուրքիայից, Հայաստանից, Ռուսաստանից, Մակեդոնիայից, Միացյալ Նահանգներից, Ֆրանսիայից և Նորվեգիայից, որի մասնագիտական ուսումնասիրությունների միջոցով բացահայտվեցին վերոհիշյալ վայրերը և այդպիսով՝ ավելի հարուստ և բազմակողմանի պատկերացում կազմվեց տարածաշրջանի ճարտարապետական ժառանգության վերաբերյալ: Սույն զեկույցում ներկայացված են աշխատաժողովի հիմնական եզրակացությունները և որոշ առաջարկներ՝ հետագա հնարավոր զարգացումների համար:

Զեկույցում տեղ գտած եզրակացություններն ու առաջարկությունները կառուցված են հետևյալ հիմնական բնութագրիչներով՝

- Առանձին վայրերի փաստաթղթավորում՝ յուրաքանչյուր վայրի կամ հուշարձանի պատմական, պատմամշակութային (ներառյալ՝ ճարտարապետական և վիմագրական տարրերը) և հնագիտական կարևորությունը պարզելու համար.
- Գնահատել յուրաքանչյուր վայրի համար առկա ռիսկերի աստիճանը՝ ընթացիկ կառուցվածքային պայմանները պարզելու և առաջարկներ ներկայացնելու համար խիստ անհրաժեշտ միջամտություններ կատարելու ուղղությամբ.
- Պարզել տեղական շահագրգիռ կողմերին և հարակից այլ խնդիրներ, որոնք կարևորություն են ներկայացնում այս վայրերի ապագա կառավարման վերաբերյալ որոշումներ կայացնելու տեսակետից: Սրա նպատակն է ժառանգված այս հարստության պահպանման և կառավարման նկատմամբ ընդհանուր շահագրգռվածության զգացում ձևավորելը, և իր հերթին, նաև ունենալ տեսլական՝ Կարսի շուրջ տարածարջանային կայուն զբոսաշրջության համար:

Աշխատաժողովի անվանման մեջ ընդգծված է համատեքստը: Դա ամենևին էլ պատահական չէ: Մենք համոզված ենք, որ մշակութային ժառանգությունը պետք է դիտարկել ավելի լայն համատեքստում և երկարաժամկետ տեսլականի ներքո: Սա միակ ուղին է բոլոր այն արժեքներն ու շահերը ամբողջությամբ միահյուսելու համար, որոնք կապված են տարածաշրջանում առկա հարուստ ժառանգության հետ, և որի օրինակներից մեկն էլ հանդիսանում է Անին շրջապատող ժառանգությունը:

Այս նպատակի հետ կապված մենք ահռելի ներուժ ու նշանակալի մարտահրավերներ ենք տեսնում: Հնարավոր մեծագույն արդյունքերից մեկը որոշ հուշարձանների և վայրերի զարգացումն է որպես ռեսուրս դրանց շրջակայքում ապրող համայնքների համար: Սա մի մոտեցում է, որը, այս ուրույն կառույցների պահպանման և հետևողական կառավարման ուղղությամբ փոխադարձ ընդհանուր շահագրգռության զգացում ձևավորելու միջոցով, օգտավետ կլինի թե՛ հուշարձանների և թե՛ տեղական համայնքների համար: Ավելի լայն կտրվածքով, սա կարող է զբոսաշրջության կենսունակ և կայուն զարգացման խթան հանդիսանալ Կարսի ամբողջ տարածաշրջանում:

Մենք նաև մեծ ներուժ ենք տեսնում պատմության հարստությունն ու բազմազանությունը և մշակութային ազդակները կարևորելու մեջ, որոնք տեսք են տվել տարածաշրջանին, օրինակ՝ վաղ քրիստոնեական ճարտարապետության գլուխգործոցների կողքին այստեղ գտնում ենք մուսուլմանական (անատոլիական) ամենավաղ ժամանակաշրջանի մզկիթը: Նման բազմազանությունն ու պատմության այս հուժկու ալիքների միախառնվելու զգացումը ունեն մի ներուժ, որը միանգամայն դուրս է գալիս տեղական շրջանակներից և զմայլող ու գրավիչ է դառնում ճանապարհորդների համար:

Ինչպես աշխարհի հարուստ մշակութային ժառանգությամբ ներկայացող շատ անկյուններում, այստեղ ևս զգալի են մարտահրավերները: Դժվար է ապահովել պահպանումն ու կայուն կառավարումը այն օբյեկտի համար, որը վնասված է այն աստիճան, որ մատչելի վերանորոգման ենթակա չէ: Այնուամենայնիվ, շատ բան դեռ պահպանվել է, որը կարելի է փրկել ապագայի համար՝ նախապես ողջամիտ ռեսուրսներ հատկացնելով:

Զեկույցում մենք փորձ ենք կատարել առաջնայնություն տալու առանձնակի կարևորություն ունեցող վայրերին, ինչպես նաև՝ այնպիսիներին, որոնք հրատապ լուծման կարիք ունեցող խնդիրներ ունեն՝ դրանք ամրացնելու և ապագայի համար պահպանելու գործում:

Հուսով ենք, որ սույն զեկույցը կարող է ներդրում հանդիսանալ՝ խթանելով տարածաշրջանում ընթացող աշխատանքը լրացնելու և քաջալերելու, ինչպես նաև՝ Անիի շրջակայքի համար կարևոր ռեսուրս հանդիսացող մշակութային ժառանգությունը ապագայում պահպանելու ուղղությամբ:

Աշխատաժողովի անցկացմանը և սույն զեկույցի կազմմանը նպաստել է այն արդյունավետ մասնագիտական համագործակցությունը, որը ծավալվել է «Անադոլու կուլտուր» կազմակերպության, Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի, Կոջ համալսարանի Անատոլիական քաղաքակրթությունների հետազոտությունների կենտրոնի և հատկապես Թուրքիայում Նորվեգիայի դեսպանատան միջև, որն այս նախաձեռնությունը հնարավոր դարձրեց՝ իր առատաձեռն ֆինանսական աջակցությամբ: Մենք շնորհակալություն են հայտնում բոլոր մասնակիցներին իրենց ոգևորվածության և աջակցության համար:

Կարսթեն Պալուդան-Մուլե
Մշակութային ժառանգության հետազոտությունների
նորվեգական ինստիտուտի (ՆԻԿՈՒ) գլխավոր տնօրեն

Կատարողական ամփոփում

2013 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 4-ը այցեր են կատարվել Կարսի շրջանում: Հոկտեմբերի 5-ին Կարսի «Բյույուք Կալե» հյուրանոցում, որտեղ հանգրվանել էին մասնակիցները, անցկացվել է ամփոփիչ նիստը: Աշխատաժողովի անցկացումը հնարավոր է եղել Անկարայում Նորվեգիայի դեսպանատան ֆինանսավորման շնորհիվ

Աշխատաժողովի նպատակները

Աշխատաժողովի նպատակն էր ձևավորել փորձագետների մի խումբ՝ պարսպապատ Անի քաղաքին պատմականորեն առնչվող մի շարք կարևոր հուշարձանների վիճակն ուսումնասիրելու և ստացված արդյունքները ներկայացնելու համար: Նշված հուշարձանների մեծ մասը պահպանել է իր ճարտարապետական ձևերը և հակական ճարտարապետական ավանդույթների վկայությունն է: Կարսի տարածաշրջանի մշակութային պատկերը բնորոշվում է բազմաթիվ պատմա-ճարտարապետական կառույցներով ու ավերակներով, որոնք կենդանություն ու ամբողջականություն են հաղորդում Անիի հարուստ պատմությանը: Նման ներուժ ունեցող այս ժառանգությունը կարող է տնտեսապես նպաստել տեղական համայնքների զարգացմանը:

Աշխատաժողովի առաջին օրը խումբն այցելեց Անի՝ տեղանքին և առկա խնդիրներին ծանոթանալու համար: Առանձնակի հետաքրքրություն էր ներկայացնում Անիի Մայր տաճարում և Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում տարվող աշխատանքը, որն իրականացվում է Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի (ՀՀՀ) և Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության հարցերի նախարարության համատեղ ջանքերով: 1996 թ. ՀՀՀ-ն նշված երկու վայրերն ընդգրկել է իր պահպանության ցանկում՝ միջազգային մակարդակով իրազեկում և ջատագովություն իրականացնելու նպատակով: Հաջորդ փուլերի համար ՀՀՀ-ն այս վայրերը նորից է ներառելու՝ ցուցադրելով Անիի հրատապ կարիքներն ու մշակութային կարևորությունը: Վերահսկիչ ցանկում ընդգրկելուց հետո ՀՀՀ-ի նախաձեռնությամբ և աջակցությամբ իրականացվում է փաստաթղթավորման և պահպանման մի ծրագիր, որի նպատակն է Անիի Մայր տաճարի և Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու ամրացումը, ինչպես նաև՝ Անիի հնագիտական համապատկերի հանրայնացումը և ճիշտ ներկայացումը: Ի լրումն ՀՀՀ-ի կատարած աշխատանքների՝ Մշակութային ժառանգության հետազոտությունների նորվեգական ինստիտուտը (NIKU), հետաքրքրված լինելով Անիով, հզոր ու արժեքավոր հարթակ է տրամադրում այս ծրագրի հետ կապված հետազոտությունների և մեկնաբանությունների գործում կարևորությունը մեծացնելու և միջազգային մասնակցությունն ընդլայնելու համար:

Ուսումնասիրման համար այցելված 22 կոթողները ընտրվում են Անիի անմիջական մոտակայքում՝ ոչ ավելի, քանի մեկուկես ժամ հեռավորության վրա: Խնդրո առարկա հուշարձաններից շատերը մշակութային մեծ արժեք են ներկայացնում, սակայն վերականգնման աշխատանքների խիստ կարիք ունեն: Պատմամշակութային այս ժառանգությունը տեղակայված է հայ-թուրքական սահմանի երկու կողմերում: Սույն աշխատաժողովի ուշադրության կենտրոնում էին թուրքական կողմում գտնվող հուշարձանները

Զեկույցի խմբային մեթոդաբանությունը

Այցերը բացահայտող բնույթ ունեին և ուղղված էին տեղեկություններ հավաքագրելուն և արդյունքները միմյանց փոխանցելուն: Վերջին օրը փորձագետների խումբը մասնակցեց պաշտոնական ամփոփիչ հանդիպմանը՝ ձեռք բերված նյութերը և հետագա քայլերը հստակեցնելու համար: Գնահատվեցին այցելված վայրերը, և կազմվեց առաջնահերթ գործողությունների մի ցանկ, որի հիմքում առաջարկվող հրատապ միջամտության տեսանկյունից, որպես վճռորոշ գործոններ ընկած էին հուշարձանների պատմական նշանակությունն ու խոցելիությունը: Այս դասակարգումը հիմք հանդիսացավ «Ռիսկերի գնահատման թվացանց (մատրից)»-ի համար, որը կազմում է սույն զեկույցի անքակտելի մասը:

Աշխատաժողովի արդյունքները բազմակի էին: Առաջին՝ աշխատաժողովի մասնակիցները կարողացան կազմել անհապաղ միջամտություն պահանջող առաջնահերթ վայրերի ցանկը: Մրենի տաճարը, Տիգնիսի բերդը, Հոռոմոսի և Խծկոնքի վանական համալիրները մտնում են դասակարգման ամենաառաջնային խմբի մեջ: Միաժամանակ հաշվի առնելով նրանց կարևորությունն ու խոցելիությունը՝ հենց այս չորս վայրերն են երաշխավորվել առաջին իսկ հնարավոր միջամտությունների համար, ինչպես որ պարզաբանված է «Անին համատեքստում. ներածություն և գերակա վայրեր» բաժնում: Առաջնահերթ վայրերի ցանկը կազմելու հետ մեկտեղ, խումբը որոշեց, իբրև փորձնական տարբերակ, կենտրոնանալ Խծկոնքի համալիրի վրա (տես՝ Հավելված Ա)՝ իրականացնելով մանրամասն բազմաոլորտ գնահատում և ձևակերպելով առաջարկվելիք գործողությունների ցանկը, այդ թվում՝ պարզելով տեղական համայնքում եկամուտի գոյացման տարբերակները: Նմանատիպ վերլուծություններ ապագայում կարող են իրականացվել նաև այլ վայրերի վերաբերյալ:

Այցերի իրականացմամբ և «Ռիսկերի գնահատման թվացանցի» մշակմամբ՝ աշխատաժողովի մասնակիցները կարողացան ներկայացնել այցելված 22 վայրերի նկարագրությունը, որոնցից շատերը քիչ հայտնի են: «Ռիսկերի գնահատման թվացանցը» հանգամանորեն արտացոլված է համառոտ «Տեղանքի հետազոտության» մեջ, և երկուսը պիտի դիտարկվեն միասնաբար

Ռիսկերի գնահատման թվացանց

«Ռիսկերի գնահատման թվացանցում» զետեղվածն արտացոլում է «Անին համատեքստում»-ի խմբի կողմից այցելած վայրերի նախնական, հպանցիկ գնահատումը, և պիտի դիտարկվի որպես մոտավոր նկարագրություն: Թվացանցը հիմնված է Հերբ Սթովելի «Ռիսկերի նախապատրաստություն. կառավարման ձեռնարկ Համաշխարհային մշակութային ժառանգության համար» (*Herb Stovel, Risk Preparedness: A Management Manual for World Cultural Heritage, ICCROM, Rome, 1998*) գրքի վրա: Գնահատման ամբողջ աշխատանքը եղել է միայն տեսողական՝ առանց բացահայտող ուսումնասիրությունների (օրինակ՝ զոնդավորման կամ նյութական նմուշների ստուգման): Յուրաքանչյուր վայրին հատկացված ժամանակը եղել է երկու ժամից ոչ ավելի: Հետագայում այս վայրերը կրկին գնահատելու դեպքում հարկ կլինի վերագնահատել նաև թվացանցը: Այցելված վայրերը ժամանակին բաղկացած են եղել մեկից ավելի կառույցներից, որոնցից շատերն արդեն գոյություն չունեն, ուստի դրանք ներառված չեն: Գերեզմանատները, դամբարաններն ու օժանդակ կառույցները աշխատաժողովի ուսումնասիրության առարկա չեն եղել, սակայն դրանք կարող են օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար:

«Ռիսկերի գնահատման թվացանցի» միջոցով այցելած վայրերը ենթարկվել են թվային դասակարգման՝ կարևորության (1-25) և խոցելիության տեսակետից (1-35 սանդղակով): Գնահատման հիմքում ընկած են եղել բազմաթիվ գործոններ, ընդ որում, ըստ կարևորության աստիճանի դասակարգման ընթացքում օգտագործվել են հետևյալ հասկացությունները՝

- **հետազոտման աստիճանը.** Նախկինում ինչպիսի՞ հետազոտական աշխատանք է կատարվել տվյալ կառույցի հետ կապված: Արդյո՞ք հայտնի է հուշարձանի անվանումը:
- **ծավալային հորինվածքի պահպանվածության աստիճանը.** Որքանո՞վ է շինության ծավալային հորինվածքը արտաքինից ընկալելի:
- **արտաքին հարդարանքի պահպանվածության աստիճանը.** Որքա՞ն (հարդարանքի) մակերես է մնացել շենքի արտաքին հարդարանքի վրա:
- **ներքին հարդարանքի պահպանվածության աստիճանը.** Որքա՞ն (զարդանախշային) մակերես է մնացել շենքի ներքին հարդարանքի վրա:
- **հնագիտական պահպանվածության աստիճանը.** Հնագիտական տեսանկյունից, որքանո՞վ են նշանակալի հայտնաբերված ավերակները

Թվացանցի օգնությամբ նշված վայրերն այնուհետև խմբավորվել են ըստ միջամտության հրատապության աստիճանի: Թվացանցի առաջին խմբում հայտնված վայրերը՝ Մրենի տաճարը, Տիգնիսի բերդը, Խծկոնքի և Հոռոմոսի վանքերը կարիք ունեն անհապաղ միջամտության

Ռիսկերի գնահատման թվացանց

		Կարևորություն						Խոցելիություն								
		Ժառանգության հետազոտման ասոցիացիան	Ծակոցային հորինվածքի պահպանվածության ասոցիացիան	Արտաքին հարդարանքի պահպանվածության ասոցիացիան	Ներքին հարդարանքի պահպանվածության ասոցիացիան	Հողբնտանի դրսևորումների ասոցիացիան	**Կարևորության գործոնների գումարը**	Կառուցվածքային անկայունության գործոնը	Հասանելիության ասոցիացիան	Երկրաշարժ	Քամուց և անձրևից ցայտակիզության գործոնը	Հիմնահողի անկայունության գործոնը	Ջրհեղեղ	Մարդածին	**Խոցելիության գործոնների գումարը**	**Կարևորության գործոնների + խոցելիության գործոնների գումարը**
Խումբ 1: Անհապաղ միջամտություն	Հոռոմոս–Սբ Մինաս	5	4	4	4	5	**22**	5	4	5	5	1	4	5	**29**	**51**
	Հոռոմոս–Սբ Գևորգ	5	4	4	4	5	**22**	5	4	5	5	1	4	5	**29**	**51**
	Մրենի տաճար	5	4	5	5	5	**24**	5	5	5	5	1	0	5	**26**	**50**
	Խծկոնք–Սբ Սարգիս	5	5	5	4	5	**24**	4	5	4	3	2	0	4	**22**	**46**
	Հոռոմոս–Սբ Հովհաննես	5	4	2	5	5	**21**	5	3	5	5	0	0	5	**23**	**44**
	Հոռոմոս–խորանով դահլիճ	5	3	2	5	5	**20**	5	3	5	5	0	0	5	**23**	**43**
	Տիգնիսի բերդ	4	3	3	2	5	**17**	5	3	5	5	2	0	4	**24**	**41**
	Կարմիրվանք	4	5	4	4	5	**22**	4	3	4	3	1	1	3	**19**	**41**
	Տայլար	4	4	4	4	5	**21**	5	2	5	5	0	0	3	**20**	**41**
	Մաղասբերդ	4	3	3	2	5	**17**	3	5	5	5	1	0	4	**23**	**40**
Խումբ 2: Հարակից միջամտության անհրաժեշտություն	Բագնայր–Սբ Աստվածածին	5	3	2	4	5	**19**	4	0	5	5	0	1	4	**19**	**38**
	Ուղուզլու (Օղուզլու)	4	2	4	3	5	**18**	5	0	5	5	0	0	4	**19**	**37**
	Կարմիր վանք	2	5	5	4	5	**21**	1	0	5	2	0	2	5	**15**	**36**
	Բուլանըխ	3	2	2	1	5	**13**	5	3	5	5	1	0	3	**22**	**35**
	Նախիջևան	4	1	1	0	5	**11**	5	0	5	5	0	5	4	**24**	**35**
	Ուզուն եկեղեցի	2	2	3	3	5	**15**	5	0	5	5	0	0	4	**19**	**34**
	Հոռոմոս–«Հաղթակամար»	5	2	2	2	5	**16**	3	1	3	5	2	0	3	**17**	**33**
	Տեկոր	5	2	2	1	5	**15**	4	1	3	5	2	0	5	**18**	**33**
	Երազգավորս	4	1	1	1	5	**12**	4	1	5	5	1	0	4	**20**	**32**
	Հովվի եկեղեցի և բաղնիքներ	4	2	1	1	5	**13**	4	1	5	5	0	0	3	**18**	**31**
Խումբ 3: Միջամտության անհրաժեշտության բացակայություն	Ծպնի	3	4	3	2	5	**17**	1	0	3	0	0	0	3	**7**	**24**
	Բագարան–Բերդ	5	3	3	3	5	**19**	0	0	0	1	0	0	3	**4**	**23**
	Բագարան–Կարմիր եկեղեցի	5	0	3	3	5	**16**	0	0	0	1	0	0	0	**1**	**17**
	Բագարան–Սբ Թեոդորոս	5	1	1	1	5	**13**	0	0	0	0	1	0	3	**4**	**17**
	Արգինա	5	0	1	1	5	**12**	0	1	0	1	0	0	0	**2**	**14**
	Արջո Առիճ	4	0	1	0	5	**10**	0	1	0	1	0	0	0	**2**	**12**
	Ալաման	4	0	0	0	5	**9**	0	1	0	1	0	0	0	**2**	**11**
	Ագարակ	3	0	0	0	5	**8**	0	1	0	1	0	0	0	**2**	**10**

«Անին համատեքստում». ներածություն և առաջնահերթ վայրեր

Հայկական միջնադարյան արքայանիստ մայրաքաղաք Անին, որը Մետաքսի առևտրական մեծ ճանապարհի կենտրոններից մեկն էր, հանդիսանում է արվեստի և ճարտարապետության գանձերից և գրավիչ ավերակներից մեկը: Տասնիններորդ դարում եվրոպացի ճանապարհորդները հիացել են նրա միջնադարյան հուշարձանների որակով ու քանակով: Անին այսօր ամբողջ աշխարհում հանրահայտ և հսկայական կարևորության մշակութատեղի է: Տարածաշրջանի միջնադարով զբաղվող պատմաբանները, հայկական, բյուզանդական և մուսուլմանական ճարտարապետությունն հետազոտող գիտնականները երկար ժամանակ ուսումնասիրել են Անին և ստեղծել մեծածավալ մատենագիտություն: Անին եղել է հնագիտական պեղումների և ճարտարապետության պահպանման ծրագրերի առարկա, զբոսաշրջիկների ուխտավայր: Սակայն, արդյո՞ք Անին մեկուսի մի երևույթ է: Ի՞նչ կա նրա պատերից այն կողմ: Որքանո՞վ Անին պետք է ընկալվի Կարսի շրջանի մշակութային ավելի լայն համապատկերի շրջանակներում: Այս հարցերի վրա է կենտրոնացել վերջերս անցկացված «Անին համատեքստում» աշխատաժողովը:

Աշխատաժողովի արձանագրած արդյունքները ցույց են տալիս, որ՝ 1) Անին ոչ թե կղզիացած երևույթ է, այլ միջնադարյան մշակութային ժառանգության հարուստ համակարգի մաս է կազմում՝ ձգվելով Կարսի ողջ շրջանով, 2) այս ավելի լայն ցանցն ունի ինչպես զբոսաշրջության, այնպես էլ տեղական զարգացման ներուժ, և 3) այդ զարգացումը կախված է լինելու այն հուշարձանների պահպանվածության աստիճանից, որոնք շատ դեպքերում, ցավոք, գտնվում են փլուզման եզրին: Այս դրույթները հաստատվում են չորս այնպիսի հուշարձանների օրինակով, ինչպիսիք են՝ Մրենի տաճարը, Տիգնիսի բերդը, Խծկոնքի և Հոռոմոսի վանքերը:

Մրենի տաճար

Անիից հարավ գտնվող Մրենի յոթերորդ դարի տաճարը տարածաշրջանի միջնադարի գմբեթավոր ամենամեծ բազիլիկ եկեղեցիներից մեկն է: Բյուզանդագետների ու հայագետների կողմից Մրենն առանձնացվում է որպես յոթերորդ դարի տարածաշրջանային պատերազմների հազվագյուտ վկաներից մեկը: Դարաշրջան, որը ականատեսն է եղել Միջերկրածովյան ավազանի ու Մերձավոր Արևելքի քաղաքական պատկերի արմատական փոփոխության: Մրենում պահպանվել է բյուզանդական Հերակլ կայսեր եզակի պատկերը, ում մասին նշված է նաև արևմտյան ճակատի արձանագրության մեջ: Մրենի տաճարը 10-11-րդ դդ. մեծ կարևորություն ներկայացնող հուշարձան է՝ Անիի ճարտարապետական զարգացումները ընկալելու համար: Իր մեղմ համաչափություններով և նրբորեն իրականացված որմնամույթերով, այն հաճախ համարվում է Անիի Մայր տաճարի նախատիպը:

Բագրատունյաց թագավորական հարստությունը 961 թ. Անին դարձրեց մայրաքաղաքը, իսկ Մրենը՝ ամառային նստավայր: Տասներեքերորդ դարում հարուստ մի անձնավորություն՝ Ավետենց Սահմադինը մի մեծ և ճոխ նստավայր կառուցեց Մրենում, որը ձևաբանական զուգահեռներ ուներ Անիի հուշարձանների հետ: Ուստի, Մրենի տաճարը կարող է ընդլայնել մեր պատկերացումները Կարսի տարածաշրջանի հսկայական մշակութային ժառանգության մասին՝ ցուցադրելով հուշարձանների փոխկապակցվածությունը: Սակայն, նախ պետք է լուծել նրա անմխիթար վիճակի հարցը: 2008 թ. լիովին փլուզվել է եկեղեցու հարավային պատը: Այժմ ճեղքեր կան հյուսիսարևմտյան ճակատում, իսկ Հերակլի պատկերով բարավորը այլևս զուրկ է ներքևի հենարանից: Հուշարձանի կարևորությունն ու անկայուն վիճակը վերջերս հաստատվել է Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի (ՀՀՀ) կողմից, որը 2014 թ. այն ընդգրկեց Համաշխարհային հուշարձանների պահպանության ցանկում: Մրենի պահպանումը կենսական կարևորություն է ոչ միայն պատմության և ճարտարապետության տեսանկյունից, այլև Կարսի տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման տեսանկյունից:

Խծկոնքի վանքը

Խծկոնքի վանական համալիրը գտնվում է Տեկոր գետակի հովտին նայող տպավորիչ հրվանդանի վրա: Համալիրի միակ պահպանված եկեղեցին՝ Սուրբ Սարգիսը (հիմնված 1025թ.), մի շրջանաձև տպավորիչ շինություն է, որը կառուցված է պատվանդանի վրա՝ շրջապատված կիսաբոլոր սյուներով և պսակված յուրահատուկ ճակտոնային վեղարով: Իր հորինվածքով Խծկոնքի վանքը հանդիսանում է

Անիի ճարտարապետական դպրոցի ձևավորման ու տարածման արժեքավոր վկայությունը: Անիի Մայր տաճարը և այդ ժամանակի այլ հուշարձաններ ուշադրություն են գրավում շինության արտաքին երեսպատմամբ, որը կատարված է սյունակամարային ներդաշնակ համակարգի միջոցով: Խծկոնքը նմանատիպ լուծմամբ կատարյալ նմուշներից է: Եկեղեցին արտաքինից պատված է արձանագրություններով, որոնք վկայում են վանքի նորոգումների և արված մի շարք նվիրատվություններն մասին: Սրանք վկայում են տարածաշրջանի իշխող խավերի սոցիալական, քաղաքական և տնտեսական փոխադարձ կապերի մասին. օրինակ՝ արձանագրություններից մեկը վկայում է Մրենի խաղողի այգիներից մեկը Խծկոնքի վանքին նվիրաբերելու մասին: Իր ճարտարապետական լուծումներով ու հարդարանքով, արտակարգ գեղատեսիլ համայնապատկերով Խծկոնքը մեծ ներուժ ունի զբոսաշրջիկներին դեպի տարածաշրջան գրավելու համար: Սակայն Սուրբ Սարգիսը, ինչպես և Մրենի տաճարը, կառուցվածքային առումով խաթարված են: Մեր աշխատաժողովին մասնակից շինարարական ճարտարագիտության և սեյսմոլոգիայի ոլորտների փորձագետները հանգել են այն եզրակացության, որ արտակարգ միջոցառումներ են անհրաժեշտ՝ զբոսաշրջիկների անվտանգությունն ու հուշարձանի պահպանումն ապահովելու նպատակով:

Հոռոմոսի վանքը

Հոռոմոսի վանքը գտնվում է Անիից դեպի հյուսիս տասը կիլոմետր հեռավորության վրա: Այն բաղկացած է վերին և ստորին հուշարձանախմբերից, որոնց հնարավոր է մոտենալ զարմանալի և

եզակի հաղթակամարի միջով: Տասներորդ դարում հիմնադրված Հոռոմոսը ճարտարապետական մի գլուխգործոց է, որը բաղկացած է պաշտամունքային, մեմորիալ և վանքապատկան հատվածներից՝ լուծված հարդարանքային և ճարտարապետական որոշ եզակի տարրերով և 10-13-րդ դարերով թվագրվող կառուցողական ոճերով: Ախուրյան գետին նայող բարձրադիր սարահարթում հոյակապ տեղադրված լինելն արդեն իսկ ընդգծում է այս հուշարձանի ճարտարապետական հատկանիշները: Իր չափերի, Բագրատունյաց արքայատոհմի հետ ունեցած կապերի և միջնադարյան տարեգրություններում հաճախակի հիշատակման շնորհիվ այն համարվում է Անիի մերձակայքում գտնվող ամենակարևոր վանքը:

Վանական համալիրի առավել հայտնի շինությունն է Վերին Հոռոմոսի գլխավոր եկեղեցու նախասրահը կամ ժամատունը: Թվագրվելով 1038թ.-ով և կցված լինելով գլխավոր եկեղեցուն՝ այն համարվում է նախասրահի ամենավաղ պահպանված օրինակը հայկական ճարտարապետության մեջ: Միևնույն ժամանակ այն ճարտարապետական բարձր վարպետությամբ կառուցված շինություն է, որն ուշագրավ է իր հարթ քարերով երեսպատված առաստաղով ու բաց երդիկով, որոնք հարդարված են շքեղ զարդանախշերով: Ինչպես Խծկոնքի վանքի և Մրենի տաճարի դեպքում, այս կառույցը նույնպես վտանգված է: Մեր փորձագետները ժամատան հետ կապված մի շարք կառուցվածքային խնդիրներ են մատնանշել, ներառյալ երդիկի անկայուն վիճակը: Ընդհանրապես, Հոռոմոսի վանքը տալիս է ինչպես պահպանմանն ուղղված ծրագրեր մշակելու, այնպես էլ զբոսաշրջության համար արտակարգ տեսարժան վայր ստեղծելու հնարավորություն:

Տիգնիսի բերդը

Կարսի տարածքում պահպանված հուշարձանների թվում կան նաև միջնադարյան ամրաշինական կառույցների օրինակներ: Այս առումով Անիի պարիսպներն իհարկե ամենահայտնին են, սակայն Կարսի և Բագարանի միջնաբերդերն ու պարսպապատ քաղաքները, ինչպես նաև Մաղասբերդի ու Տիգնիսի ավելի փոքր ամրոցները հաստատում են այն փաստը, որ Անին եզակի օրինակ չէ, և այս տարածաշրջանը պատմության վկայությամբ հանդիսացել է բազմաթիվ զավթիչների տենչանքի առարկա:

Կալկանկալե գյուղի մոտ գտնվող Տիգնիսի բերդից պահպանվել են արտաքին և ներքին բոլորաձև պատերի և աշտարակների հատվածներ, ինչպես նաև սրահների հետքեր աշտարակների ներսում: Բերդի պատմությունը գրեթե անհայտ է: Միանշանակ Տիգնիսի բերդը, թեկուզ և հատվածաբար, թողնում է հզոր ամրաշինական կառույցի տպավորություն, որի մնացորդները չնայած բավականին բարձր են պահպանվել, սակայն կայուն չեն: Բերդի մեծ մասը ավերվել է դեռևս տասներկուերորդ դարի սկզբին, սակայն կարծիք կա, որ այս հզոր կառույցից պահպանվածն էլ կանհետանա, եթե մոտ ապագայում կառուցվածքային միջամտություններ չիրականացվեն:

Քրիստինա Մարանչի

Արթուր Հ. Դաղեան և Արա Տ. Օգթեմել

Թաֆթս համալսարանի հայ արվեստի պրոֆեսոր

Հետազոտված վայրերի քարտեզ



Ներկայացվելիք հետազոտության մեջ տրվում է յուրաքանչյուր վայրի հաշվառման կարգավիճակը: Մշակութային ժառանգության «հաշվառված» վայրերն ու հուշարձանները նրանք են, որոնք ներկայացնում են իրենց ժամանակաշրջանին բնորոշ հատկանիշները և սահմանվում են որպես մշակութային արժեք՝ ելնելով դրանց պատմությունից, արվեստից և շրջանից: Այնուհետև հուշարձանը՝ հնարավորինս պահպանելու նպատակով, կհաշվառվի պետության պահպանության շրջանային կառույցի կողմից: Հուշարձանների հաշվառման և պահպանության մասին լրացուցիչ տեղեկություններ տես՝ http://www.kulturvarliklari.gov.tr/TR,43249/law-on-the-conservation-of-cultural-and-natural-propert-.html:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Մերքեզ/Կենտրոնական շրջան
N 40.519818, E 43.62925

Ճարտարապետական համալիրը տեղակայված է Անիից հյուսիս մոտ 10 կմ հեռավորության վրա Ախուրյան գետի հյուսիսարևմտյան ափին: Հոռոմոսի վանք կարելի է հասնել մեքենայով, ապա՝ ոտքով. ճանապարհի երկու հատվածներից յուրաքանչյուրի վրա կծախսվի կես ժամ:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Հոռոմոսի վանք

10-13-րդ դարեր

Նկարագրությունն ու նշանակությունը
Հոռոմոսը եղել է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիի մերձակայքում գտնվող թերևս ամենակարևոր վանքը: Այն ամենախոշորներից մեկն է՝ միջնադարյան Հայաստանի և ամբողջ քրիստոնեական Արևելքի տարածքում: Համալիրի կազմում են՝ Սուրբ Մինաս և Սուրբ Գևորգ, Սուրբ Հովհաննես եկեղեցիները, գավիթը, խորանով սրահը և «հաղթակամարը»: Այն բացառիկ ճարտարապետական համալիր է, որը գրավիչ է նաև բնական լանդշաֆտի համայնապատկերում իր հոյակապ տեղադրվածությամբ: Վանքի ծագման և զարգացման մասին հարուստ տեղեկություններ կան պատմական աղբյուրներում և վանքապատկան կառույցների պատերին թողնված վիմագիր արձանագրություններում:

Վիճակը
Շինությունները նորոգման կարիք են ունեցել դեռևս 12-րդ դարի սկզբից: Տասնամյակներ շարունակ տևած բնական քայքայման, պատերին առկա վանդալիզմի և ապօրինի պեղումների արդյունքում դրանք այժմ անմխիթար վիճակում են:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը
Թվացանցի 1-ին խումբը պահանջում է անհապաղ միջամտություն: Համալիրի որոշ՝ ավելի փոքր կառույցներ արդեն իսկ անհետացել են, իսկ մնացած կառույցներն ունեն անհապաղ ու լայնածավալ ամրակայման և վերականգնման կարիք:

Մրենի տաճար

7-րդ դար

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Դիգորի շրջան

N 40.24123, E 43.66160

Մրենի լքված տաճարը գտնվում է բարձրադիր սարահարթի վրա, որն արևելյան և հարավային կողմերից սահմանակցում է Ախուրյան գետի հովտին, իսկ արևմուտքում՝ ջրագուրկ կիրճին: Ամենամոտ գյուղերն են Կիլիտաշին (3 կմ դեպի հարավ) և Կարաբաղը (5 կմ դեպի արևմուտք): Մրենը տեղակայված է ռազմական գոտու տարածքում և հասանելի չէ հանրությանը:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Մրենի տաճարը, կառուցված լինելով 638 թ., բյուզանդա-պարսկական պատերազմների և արաբական առաջին արշավանքների ժամանակաշրջանում, քաղաքական տարբեր կողմերի միջև համագործակցության և հակամարտության հետևանքներով ամայացած ցայտուն օրինակ է: Հայաստանի, ուշհռոմեական ու պարսկական կայսրությունների և վաղ մուսուլմանական ժամանակաշրջանով զբաղվող պատմաբանների կողմից ուսումնասիրվել են տաճարի արձանագրություններն ու քանդակները՝ այս քիչ փաստագրված դարաշրջանի մասին արժեքավոր տեղեկություններ ստանալու համար: Միևնույն ժամանակ, գիտնականների կողմից Մրենն արժևորվում է իբրև «ոսկեդարի» հայկական ճարտարապետության դասական մի հուշարձան, յոթերորդ դարի հայկական գմբեթավոր ամենամեծ բազիլիկ եկեղեցիներից մեկը, ինչպես նաև հարևանությամբ կառուցված Անիի հանրահայտ Մայր տաճարի (989-1001 թթ.) ոգեշնչման աղբյուր: Միաժամանակ, Մրենը միջազգայնորեն ընկալվում է որպես հայկական մշակութային ժառանգության մաս:

Վիճակը

Արբանյակային պատկերները վկայում են այն մասին, որ Մրենը շրջապատված է ընդարձակ հնագիտական վայրերով: Բուն տաճարի վրա առկա են վանդալիզմի դրսևորման և գանձագողության հետքեր:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 1-ին խումբը պահանջում է անհապաղ միջամտություն: Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի կողմից 2014 թ. Մրենի տաճարն ընդգրկվել է Համաշխարհային հուշարձանների պահպանության ցանկում՝ ծայրահեղ հրատապ վիճակն ընդգծելու համար: Հարավային ճակատն արդեն իսկ փլուզված է, իսկ կառույցի պահպանված հատվածը գտնվում է շատ խարխուլ վիճակում:

Խծկոնքի վանք

10-11-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Դիգորի շրջան

N 40.380384, E 43.376399

Խծկոնքի վանքը անհասանելի է ճանապարհից: Այստեղ հասնելու համար պետք է Դիգոր քաղաքի կենտրոնից ձորի միջով գնալ մոտ 4,5 կմ դեպի արևմուտք: Որպես այլընտրանք՝ կարելի է հասնել նաև Ազարակ բնակավայրից: Իջնելն ավելի դժվար է, սակայն այսպես վանք հասնելու ընդհանուր տևողությունը զգալիորեն կրճատվում է:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Խծկոնքի վանքի պատմությունը սկսվում է հետարաբական ժամանակաշրջանից, երբ կառուցվեց առաջին՝ Սուրբ Կարապետ եկեղեցին: Վանքն ընդհանուր առմամբ ունեցել է հինգ եկեղեցի՝ Սուրբ Կարապետ, Սուրբ Աստվածածին, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Գրիգոր և Սուրբ Սարգիս, բոլորն էլ՝ գմբեթավոր են՝ վարպետորեն կառուցված սրբատաշ քարից: Այսօր կանգուն վիճակում է միայն Սուրբ Սարգիս եկեղեցին:

Վիճակը

Եկեղեցու ներսում կան գանձագողության և հրդեհման հետքեր, իսկ պատերին՝ մեծ քանակությամբ վանդալիզմի դրսևորումներ:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 1-ին խումբը պահանջում է անհապաղ միջամտություն: Ներկայումս Սուրբ Սարգիս եկեղեցին անվտանգ չէ ցանկացած նպատակի, այդ թվում՝ զբոսաշրջիկների այցելությունների համար, ուստի այս հուշարձանին մոտենալը պետք է արգելվի: Կառույցն ամրակայելու համար անհրաժեշտ է ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ, որից հետո՝ անցնել ավելի մասնագիտական վերականգնման աշխատանքներին: Ավելի մանրամասն պարզաբանումների համար, տես՝ Հավելված Ա. Խծկոնքի վանքի գնահատումը:



Տիգնիսի բերդ

9-11-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Քալքանկալե գյուղի մոտ,
Ակյակայի շրջան,
N 40.713338, E 43.71631

Տիգնիսը գտնվում է Անիից մոտ 25 կմ դեպի հյուսիս և նախկին Շիրակավան բնակավայրից 3 կմ փոքր-ինչ դեպի հյուսիս-արևմուտք: Վայրը հասանելի է հողածածկ ճանապարհով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Տիգնիսը մոտ է Շիրակավանին, որն ինն երորդ դարում՝ նախքան մայրաքաղաքը Անի տեղափոխելը, եղել է Բագրատունյաց թագավորների նստավայրը: Այն գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1500 մ բարձրության վրա, Ախուրյան գետի աջակողմյան վտակներից մեկի՝ Կարահանչայ գետակի ոլորապտույտ հովտին նայող սարահարթի եզրին: Տիգնիսի ավերակները փաստում են միատարր ուղղանկյուն և պարզ հատակագծով բերդի մասին, որի երկար ձգվող հատվածը նայում է հովտին՝ հնարավոր հարձակման ուղղությամբ: Շինության շինարարական տեխնիկան ու նյութերը տիպիկ են տարածաշրջանի միջնադարյան կառույցների համար: Թվում է, որ Տիգնիսը ոչ թե պաշտպանել է քաղաքային բնակավայրը, այլ ծառայել է որպես ամրացված պահեստ կամ հարուստ և ընդարձակ գյուղատնտեսական նշանակությամբ տարածքին նայող դիտաշտարակ:

Վիճակը

Բերդը ավերակ վիճակում է, սակայն պատերի առանձին մեծ հատվածներ մնում են կանգուն:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 1-ին խումբը պահանջում է անհապաղ միջամտություն: Պարիսպների կանգուն մնացած հատվածներն անհապաղ ամրացնելու կարիք ունեն: Մինչև ընթացիկ աշխատանքների սկիզբը, որպես հրատապ միջոցառում, անհրաժեշտ է հենարաններ տեղադրել կառույցի կրող պատերի բացակայող ստորին հատվածներում:

Կարմիրվանք

10-13-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Անիից 2 կմ դեպի հյուսիս,
Ախուրյանի կիրճի եզրին,
Մերքեզ/Կենտրոնական շրջան
N 40.51455, E 43.601308

Կարմիրվանքը գտնվում է Անիից փոքր-ինչ արևելք՝ Ախուրյան գետի գեղատեսիլ կիրճում: Միակ տարբերակն այստեղ հասնելու համար՝ 30-40 րոպե ոտքով ձոր իջնելն է:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Վանքի և եկեղեցու ծագման մասին ոչինչ հայտնի չէ՝ չնայած նրան, որ եկեղեցու պատերին առկա են տասներեքերորդ դարի Անիի պատմությունը լուսաբանող արձանագրություններ: Կարմիրվանքի եկեղեցին՝ գմբեթավոր դահլիճ հորինվածքի փոքր տարբերակն է՝ արևմտյան կողմում գմբեթատակ մեկ զույգ մույթերով: Ներքուստ այն շատ կուռ է, գրեթե քառակուսի ծավալով:

Գլանաձև թմբուկը դրված է կամարակապ գմբեթատակ քառակուսու վրա՝ լուծված առագաստային համակարգով: Արևելյան երկու ավանդատները ունեն խորաններ և բացվում են դեպի գլխավոր սրահ: Արևմտյան ճակատն աչքի է ընկնում առատ հարդարանքով. այստեղ տեղադրված խաչքարերը բնորոշ են տասներորդ դարին: Վանքապատկան շինությունները և հավանաբար սեղանատունը, գտնվել են եկեղեցու արևմտյան կողմում:

Վիճակը

Շինությունների վիճակը կտրուկ վատթարացել է ոչ վաղ անցյալում: Անգամ քսաներորդ դարի սկզբին շինությունները նկատելիորեն ավելի լավ վիճակում էին, քան այժմ: Չնայած եկեղեցու տանիքը պահպանվել է, իսկ պատերը կանգուն են, սակայն առկա են լուրջ վնասվածքներ, հատկապես արևմտյան և հարավային ճակատների խիստ քայքայվածությունը, որտեղ ամբողջությամբ քանդված-հանված են պատերի ստորին հատվածները: Եկեղեցու հարավարևմտյան հատվածի վանական շինություններից մասնակի պահպանվել են միայն պատերը:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 1-ին խումբը պահանջում է անհապաղ միջամտություն: Եկեղեցին ունի անհապաղ վերականգնման կարիք: Մինչև ընթացիկ աշխատանքների սկիզբը, որպես հրատապ միջոցառում, անհրաժեշտ է հենարաններ տեղադրել կառույցի կրող պատերի բացակայող ստորին հատվածներում: Համալիրի մյուս կառույցները ևս պահպանության կարիք ունեն:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Մերքեզ/Կենտրոնական շրջան
N 40.537294, E 43.637732

Տայլարի եկեղեցին գտնվում է համանուն գյուղի կողքին՝ Հոռոմոսից մոտ 2 կմ հյուսիս-արևելք, Ախուրյան գետի աջ ափին: Եկեղեցին շրջապատված է խորը կիրճով՝ բացի մեկ կողմից, որտեղ կառուցված է եղել կամարաձև դարպասը: Այստեղ կարելի է հասնել մեքենայով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

Տայլարի եկեղեցի

10-րդ դար

Նկարագրությունն ու նշանակությունը

Տայլարի եկեղեցին հայկական գմբեթավոր դահլիճ տիպի հորինվածքի փոքր տարբերակ է՝ նոր համաչափությամբ: Ի տարբերություն Բագրատունիների ժամանակաշրջանում առավել տարածված ճարտարապետական ձևերի՝ խորանին ավելի մոտ գտնվող արևելյան զույգ մույթերը Տայլարի եկեղեցու ճարտարապետը շրջել է՝ գմբեթը տեղադրելով տաճարի կենտրոնում: Արդյունքում, արտաքինից երևացող ընդհանուր ծավալում՝ գմբեթի տեղադրվածությունը կենտրոնից փոքր-ինչ հեռացած է դեպի արևմուտք:

Վիճակը

Կառույցը գտնվում է վտանգավոր վիճակում: Լուրջ վնասվածքներ կան հարավային և արևելյան կրող պատերի վրա, իսկ կամարակապ թաղով ծածկը ամբողջությամբ փլուզված է: Մակերեսները պատված են վանդալիզմի դրսևորումներով, իսկ պատերին փոքր խոռոչների առկայությունը վկայում է արձակված կրակոցների մասին: Կան նաև եկեղեցին կենդանիների ապաստարան օգտագործելու հետքեր:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 1-ին խումբը պահանջում է անհապաղ միջամտություն: Հուշարձանն ունի անհապաղ և ամբողջական վերականգնման կարիք: Մինչև ընթացիկ աշխատանքների սկիզբը, որպես հրատապ միջոցառում, անհրաժեշտ է հենարաններ տեղադրել կառույցի կրող պատերի բացակայող ստորին հատվածներում:

Մաղասբերդ

5-րդ դար/10–13-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Դիգորի շրջան
N 40.475624, E 43.541173

Մաղասաբերդը գտնվում է ռազմական գոտու տարածքում՝ ռազմականյանից 1,5 կմ հեռավորության վրա: Այսպիսով հասանելի չէ:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Մաղասբերդը բաղկացած է Ախուրյան գետի ափամերձ բարձրադիր հարթավայրը պաշտպանող փոքր բերդից և դրա շուրջ գտնվող մեծ պարսպապատ բնակավայրից: Չի բացառվում, որ քաղաքը գոյություն է ունեցել դեռևս հինգերորդ դարի վերջում կամ վեցերորդ դարի սկզբում: Բերդի կանգուն կառույցը, ամենայն հավանականությամբ, սերնդակից է Անիի պարիսպներին (10-13-րդ դդ. և ավելի ուշ): Պաշտպանական միակ պահպանված հատվածը բաղկացած է հյուսիսային կողմում գտնվող կրկնակի պարսպից, որին կից կառուցված են կիսաբոլոր երեք աշտարակները: Ներքին և արտաքին պարիսպների հատակագիծը հիշեցնում է Անիի հյուսիսային պարիսպների հատակագիծը: Բնակավայրի տարածքում պահպանվել են որոշ շինությունների ավերակներ և մի մեծ ամբար:

Վիճակը

Ամրոցին ընդհուպ մոտենալ հնարավոր չէ, հետևաբար, այն հնարավոր էր ուսումնասիրել միայն մեկ դիրքից՝ մոտ 300 մ հեռավորության վրա: Կողքերից աշտարակներով պաշտպանված դարպասը, կարծես թե, ամբողջական է, իսկ բերդի պատերը՝ համեմատաբար լավ վիճակում են պահպանվել: Սակայն բնակավայրը ավերված է: Նախկինում այն օգտագործվել է թուրքական բանակի կայազորի համար, ուստի և՛ բնակավայրը, և՛ բերդը փակ են այցելուների համար: Սակայն ամրոցի վիճակի վերաբերյալ ավելի մանրամասն գնահատական կարող է տրվել փորձագիտական այցից և վերլուծությունից հետո:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 1-ին խումբը պահանջում է անհապաղ միջամտություն: Անհրաժեշտ է հայցել թույլտվություն բերդը տեղում ուսումնասիրելու և երկարաժամկետ պահպանության ծրագիր մշակելու համար:

Բագնայր

10-13-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Քոզլուջա, Դիգորի շրջան
N 40.512735, E 43.484026

Վանական համալիրի մնացորդները գտնվում են Անիից դեպի արևմուտք՝ Ալաջա (հնում՝ Արջո Առիճ) լեռան լանջին, քրդական Քոզլուջա (հնում՝ Բագնայր) գյուղում: Վանքի կազմում պահպանվել են հուշարձանների երկու խումբ՝ միմյանցից մոտ 200 մ հեռավորության վրա:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Արջո Առիճի, Կարմիրվանքի և Հոռոմոսի հետ միասին, Բագնայրը եղել է Անիին առավել մոտ գտնվող հոգևոր-մշակութային կենտրոններից մեկը: Այն բաղկացած է միմյանց հետ փոխկապակցված մեծաթիվ շինություններից և երկու առանձին եկեղեցուց: Համալիրի հիմնական շինությունը գմբեթավոր դահլիճ տիպի Սուրբ Աստվածածին եկեղեցին է, որը կառուցվել է տասներորդ և տասնմեկերորդ դարերի միջև: Պահպանված եկեղեցիներից կանգուն է մնում նաև առանձին կանգնած վեցախորան եկեղեցին:

Վիճակը

Քսաներորդ դարի սկզբին արված լուսանկարներն ապացուցում են, որ գոյություն է ունեցել վանական կառույցների թեև վնասված, սակայն ամբողջական մի մեծ համալիր: Նույն դարի երկրորդ կեսի տասնամյակների ընթացքում, սակայն, կառույցների մեծ մասը քայքայվել է և ոչնչացել: Ներկայումս սկզբնական շինություններից քիչ թե շատ պահպանված է միայն կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցին, որից բացակայում են բոլոր ծածկասալերը, ճակատային հատվածի գրեթե բոլոր քարերը պոկվել-տարվել են, սակայն կառույցն ընդհանուր առմամբ մնում է կանգուն: Բագնայրի վանքի գլխավոր համալիրում մասամբ պահպանվել են Սուրբ Աստվածածին եկեղեցին, նրան կից գավթի արևելյան և հյուսիսային պատերը, արևելյան հատվածը՝ մեկ զույգ սյուներով, եռաթռիչք ծավալով ու ծածկերով, ինչի շնորհիվ կարելի է պատկերացում կազմել գավթի նախնական հորինվածքի վերաբերյալ:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Վեցախորան եկեղեցին՝ համալիրի հիմնական մասի գավթի հետ մեկտեղ, հրատապ վերականգնման կարիք ունի:

Ուղուզլու (Օղուզլու)

9-11-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Օղուզլու, Մերքեզ / Կենտրոնական շրջան
N 40.659708, E 43.551861

Հուշարձանը գտնվում է Օղուզլու գյուղում, Կարսից 15 կմ հյուսիս-արևելք և Անիից 16 կմ դեպի հյուսիս՝ Սուբաթանի ուղղությամբ: Հասանելի է մեքենայով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

Նկարագրությունն ու նշանակությունը

Համաձայն ինն երորդ դարավերջով թվագրվող արձանագրության՝ եկեղեցու հովանավորն էր Հասան Գնթունի իշխանը, ով Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսի տարեգրության մեջ հանդիսանում էր Սմբատ Ա Բագրատունի թագավորի հրամանատարը: Եկեղեցին ունի փոքր-ինչ արտասովոր հորինվածք, որն իրենից ներկայացնում է գմբեթավոր դահլիճ և ուղղանկյան մեջ ներգծված եռախորան տիպերի համակցված լուծման օրինակ, որի արդյունքում արևմտյան խաչթևը ընդլայնվել է նաև խորը խորշերով: Գմբեթատակ հատվածը իրականացված է առագաստներով՝ համապատասխան սյունափնջային կամարների միակցմամբ: Այս հատկանիշն այնուհետև զարգացում է ապրել Տրդատ Անեցու գործերում:

Վիճակը

Պարզ չէ՝ արդյոք կիսականգուն այս եկեղեցու մնացորդները գրանցված են, թե ոչ: Եկեղեցին միջնադարում վերանորոգումից հետո լավ վիճակում է եղել մինչև 1950-ական թթ., երբ այն մասնակիորեն պայթեցվեց, իսկ փլուզված կտորները հեռացվեցին տարածքից: Հեռացված բեկորների թվում է եղել նաև հարավային մուտքի պատկերազարդ բարավորը: Ներկայումս կանգուն են մնացել միայն պատերի առանձին հատվածներ: Եկեղեցու շուրջ կան ապօրինի պեղման հետքեր, իսկ պատերի վրա՝ խոռոչներ, ինչը վկայում է գանձագողության մասին:

Եկեղեցու մոտ նկատելի է ձիթհանք հիշեցնող կառույց. պարզ չէ՝ արդյոք այն սերնդակից է եկեղեցուն, թե ավելի նոր է, կամ դեռևս օգտագործվում է: Բացի դրանից՝ եկեղեցու մոտակայքում կա «հսկաների գերեզմաններ» անունով մի տարածք, որտեղ սփռված են հուշակոթողային քարեր:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Եկեղեցու տարածքը կարիք ունի պեղման, իսկ կառույցի պահպանված հատվածը՝ ամրակայման:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Յաղսենեն, Մերքեզ/Կենտրոնական շրջան
N 40.475624, E 43.541173

Եկեղեցին գտնվում է Յաղսենեն գյուղի արևելյան հատվածում, մասնավոր տան բակում:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Կարմիր վանք

10–13-րդ դարեր

Նկարագրությունն ու նշանակությունը

Խաչաձև գմբեթավոր այս եկեղեցու ներքին սրահը՝ անկյունների չորս ավանդատներով, արտաքուստ վերցված է կուռ, գրեթե քառակուսի ծավալի մեջ: Գլանաձև թմբուկը դրված է կամարներով կազմված առագաստների վրա: Արևմտյան ճակատը առանձնանում է շքամուտքով, իսկ մյուս երեք ճակատներում առկա են զույգ որմնախորշեր:

Վիճակը

Կարմիր վանքի եկեղեցին վնասվել է 1877 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, սակայն վերանորոգվել է 1880-ականներին՝ համաձայն շքամուտքի բարավորի վրայի արձանագրության: Ներկայումս, տանիքի ծածկասալերը վնասված են, և կան մի քանի ճեղքեր: Եկեղեցին այժմ օգտագործվում է որպես պահեստ, իսկ արևելյան ճակատի տակ գոմաղբ է դիզված: Բոլոր պատուհանները փակ են, իսկ կառույցը կողպված է անցանկալի այցերից:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Անհրաժեշտ է եկեղեցին մաքրել վերջին շրջանում արված տեղական միջամտությունից: Առավել հավանական է, որ առաջիկա տարիներին եկեղեցու պատերն ու ծածկը վերականգնելու անհրաժեշտություն առաջանա:

Բուլանըխ

7-րդ դար

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հաջիվելի և Բուլանըխ գյուղերի ամառային արոտավայր, Մերքեզ / Կենտրոնական շրջան
N 40.557064, E 43.374943

Եկեղեցու ավերակները գտնվում են Բուլանըխ և Հաջիվելի գյուղերի միջև՝ Հաջիվելի գյուղի արոտավայրի տարածքում, Բուլանըխ գյուղից 2 կմ հեռավորության վրա: Դեպի ավերակներ տանող ամենահարմար ուղին՝ Կարսից Անի տանող հիմնական ճանապարհն է, որից 10 կմ հեռավորության վրա առանձնանում է մի հողածածկ ճանապարհ: Բուլանըխից կամ Հաջիվելիից ճանապարհը կազմում է մոտ 45 րոպե, եկեղեցի հասնելու համար կարելի է նաև օգտվել տրակտորից:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

Նկարագրությունն ու նշանակությունը
Եկեղեցու պատմությունն անհայտ է, սակայն այն կարելի է բնորոշել որպես յոթերորդ դարի հայկական եկեղեցիներին հատուկ պարզ եռախորան հատակագծով կառույց: Մուտքի մնացորդներ են մնացել արևմտյան և հարավային որմնախորշերի վրա, հյուսիսային որմնախորշի արևելյան ծայրում կա դուռ, որը, որպես բացառիկ լուծում, կցված է խորանին:

Վիճակը
Կառույցն ավերված է, իսկ պահպանված հատվածները գտնվում են վտանգավոր վիճակում: Այնուամենայնիվ, նշմարելի են եկեղեցու հատակագիծն ու խաչթևերի հիմնական ծավալները: Պահպանված հատվածներում առկա են կամարունքերով պսակված պատուհաններ:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը
Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Ավերված եկեղեցուն անհրաժեշտ են ամրակայման աշխատանքներ:

Նախիջևան

5-7-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Կոջաքյոյ, Դիգորի շրջան
N 40.288823, E 43.458006

Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցին և դամբարանը գտնվում են Կոջաքյոյ (հնում՝ Նախիջևան) գյուղում՝ Դիգոր (հնում՝ Տեկոր) գետի աջ ափին: Հասանելի է մեքենայով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Վաղ քրիստոնեական շրջանի այս համալիրը բաղկացած է եկեղեցուց և դամբարանից: Մուտքի վրա, որը նույնպես գերեզման է պարունակում, կա արձանագրություն, որի համաձայն այստեղ է թաղված իշխան Արտավազդ Կամսարականը: Կամսարականների տոհմը եղել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շիրակ և Արշարունիք կարևորագույն գավառների սեփականատերը: Եկեղեցին ունի նաև յոթերորդ դարին բնորոշ հայերեն տառերով միատող արձանագրություն, իսկ տեղի դպրոցի շենքի կառուցման ժամանակ օգտագործվել են նույն ժամանակաշրջանով թվագրվող եկեղեցուն պատկանող արձանագրություններ ու զարդաքանդակներ կրող քարեր:

Վիճակը

1880-ականների ընթացքում տեղի բնակիչները կիսականգուն հին եկեղեցին ընդգրկել են մեկ այլ եկեղեցու մեջ, և վերջինս այդ վիճակում պահպանվել է մինչև 1920 թ.: Այսօր, գրեթե ամբողջությամբ քանդվելուց հետո, պահպանվել են միայն երեք մույթերի միջուկները: Դամբարանն ունի ստորգետնյա մուտք, որը, սակայն, փակված է լիցքով:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Տեղանքը կարիք ունի հնագիտական հետազոտության: Եկեղեցու մույթերը պետք է պահպանվեն, իսկ դամբարանը կարիք ունի ամրակայման:

Ուզուն եկեղեցի

10-11-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Էսենյայլա, Ակյակայի շրջան
N 40.743095, E 43.652065

Ուզուն եկեղեցին գտնվում է Կարսից դեպի հյուսիս-արևելք՝ Արգինայի և Տիգնիսի միջև: Հասանելի է մեքենայով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

Նկարագրությունն ու նշանակությունը

Այս գմբեթավոր եկեղեցու վերաբերյալ կա մի քանի պատմական աղբյուր: Տասնամյակ առաջ նրա պահպանված արտասովոր երկար հատակագիծը նրա նոր՝ Ուզուն քիլիսե թուրքական անվանման հիմքն է դարձել:

Վիճակը

Կառույցը գտնվում է վտանգավոր վիճակում, և մասնակի պահպանվել են միայն երկու պատ:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Անհրաժեշտ է ամրակայել եկեղեցուց պահպանված հատվածները: Մինչև ընթացիկ աշխատանքների սկիզբը, որպես հրատապ միջոցառում, անհրաժեշտ է հենարաններ տեղադրել կառույցի կրող պատերի բացակայող ստորին հատվածներում: Հուշարձանի պահպանված հատվածը չափագրության կարիք ունի, անհրաժեշտ է նաև իրականացնել հնագիտական պեղումներ:

Տեկոր

5-րդ դար

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Դիգոր, Դիգորի շրջան
N 40.37501, E 43.41212

Դիգոր (հնում՝ Տեկոր) գյուղը գտնվում է Անիից 22 կմ հարավ-արևմուտք հեռավորության վրա և հասանելի է մեքենայով: Տաճարի մնացորդները գտնվում են գյուղի հյուսիսարևմտյան սարահարթում:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Տաճարի ներկայումս կորսված շինարարական արձանագրության մեջ տեղեկություններ են եղել 480 թ. կառուցման և Սուրբ Սարգիս անվանակոչման վերաբերյալ: Այն առաջին հայտնի գմբեթավոր եկեղեցին է՝ գմբեթատակ առանձին կանգնած չորս մույթերով, որով կարևոր դեր է խաղում արևելաքրիստոնեական ճարտարապետության զարգացումն ավելի լավ ընկալելու համար: Եկեղեցին ունեցել է մի քանի հետաքրքիր ճարտարապետական լուծումներ, այն է՝ հիմքում բազմաստիճան բարձր որմնախարիսխներ, հոյակերտ շքամուտքեր, բոլորաձև սյունաշարեր և շքեղ զարդանախշեր:

Վիճակը

Եկեղեցին մասամբ տուժել է տասնիններորդ դարի վերջին տեղի ունեցած երկրաշարժից, իսկ այնուհետև՝ մոտ 1950-ական թթ., ամբողջությամբ ոչնչացվել է: Շատ քիչ բան է պահպանվել եկեղեցուց, իսկ բեկորները տարվել են գյուղ: Ներկայումս մնացել է միայն մեկ ճակատի որմնամիջուկը, որն օգտագործվում է որպես հավաբուն և գյուղացիներին պատկանող պահեստ: Կան նաև ապօրինի պեղումների հետքեր և դրանց մասին պատմություններ:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Տաճարի տարածքն անհրաժեշտ է ազատել գյուղացիների տնտեսական գործունեությունից և ենթարկել հնագիտական հետազոտության: Եկեղեցու մնացորդները պետք է խնամքով ամրակայել, իսկ մինչև ընթացիկ աշխատանքների սկիզբը, որպես հրատապ միջոցառում, անհրաժեշտ է հենարաններ տեղադրել կառույցի կրող պատերի բացակայող ստորին հատվածներում:

Երազգավորս

9-րդ դար

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Չեթինդուրակ, Ակյակայի շրջան
N 40.695509, E 43.738883

Հին դարաշրջանի այս բնակավայրը գտնվում է Անիից դեպի հյուսիս-արևմուտք մոտ 25 կմ հեռավորության վրա՝ Քալքանկալե գյուղի սահմանի մոտակայքում: Բնակավայրը կառուցվել է Ախուրյան և Կարս գետերի հատման կետում, և գյուղն ու հուշարձաններն այժմ մասնակիորեն անցել են Ախուրյանի ջրամբարի տակ: Այստեղ կարելի է հասնել մեքենայով՝ «D060» ճանապարհով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

Նկարագրությունն ու նշանակությունը

Երազգավորսը եղել է միջնադարյան բնակավայր, որն ունեցել է մայր տաճար ու մի շարք այլ եկեղեցիներ: 890 թ. Բագրատունյաց Սմբատ Ա թագավորը արքայանիստ կենտրոնը Բագարանից տեղափոխել է Երազգավորս, որը շարունակել է մնալ որպես Բագրատունյաց մայրաքաղաքը մինչև 928 թ., երբ Աբաս Բագրատունին այն տեղափոխեց Կարս: Տասնիններորդ դարում նույն տեղում գոյություն է ունեցել հայաբնակ Բաշ-Շորագյալ գյուղը:

Վիճակը

Եկեղեցին առանց գմբեթի՝ կանգուն է մնացել մինչև 1950-ական թթ., երբ այն ոչնչացվել է: Այժմ տեսանելի են միայն՝ մի քանի որմ, մույթերի հատվածներ և արևմտյան ճակատի մի մասը, այդ թվում՝ կամարակապ պատուհանը:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Հուշարձանի պահպանված մասերը ամրակայման աշխատանքների կարիք ունեն:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Օջաքլի, Մերքեզ / Կենտրոնական շրջան
N 40.519749, E 43.575054

Հովվի եկեղեցին և բաղնիքները գտնվում են Անիի հյուսիսային պարիսպներից դուրս, որոնց կարելի է հասնել 20 րոպե ոտքի ճանապարհով:

ՀԱՎԱՌՎԱԾ Է

Հովվի եկեղեցի և բաղնիքներ

11-13-րդ դարեր

Նկարագրությունն ու նշանակությունը

Հովվի եկեղեցու և բաղնիքների մնացորդները գտնվում են գյուղատնտեսական հողերի ու դաշտերի վրա: Տասնիններորդ դարի ճարտարապետ Թորոս Թորամանյանի կողմից արված արխիվային լուսանկարների և չափագրումների համաձայն՝ այն ունի աստղաձև հատակագիծ. վեցանկյուն աստղի ձևով հատակագիծը արտաքինից վերցված է 18 նիստանի բազմանկյունով: Առաջին հարկը, որը ենթադրաբար եղել է դամբարան, կազմել է գմբեթավոր կառույցի հիմքը: Արտաքինից հուշարձանն ունեցել է եռահարկ լուծում:

Վիճակը

Եկեղեցուց ու բաղնիքներից մնացել են ընդամենը հիմքերը. առաջին հարկի որմերի հյուսիսային հատվածը և վեց որմնամույթերից երկուսի ստորին հատվածները: Հիմքերում արտաքինից կան ապօրինի պեղումների հետքեր:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 2-րդ խումբը պահանջում է հնարավոր միջամտության անհրաժեշտություն: Տեղանքը կարիք ունի հնագիտական հետազոտման, կառույցի մնացորդները պետք է ամրակայվեն, իսկ մինչև ընթացիկ աշխատանքների սկիզբը, որպես հրատապ միջոցառում, անհրաժեշտ է հենարաններ տեղադրել կառույցի կրող պատերի բացակայող ստորին հատվածներում:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Վարլի, Դիգորի շրջան
N 40.326033, E 43.407473

Եկեղեցին գտնվում է Վարլի (հնում՝ Ծպնի) գյուղում՝ Դիգորից դեպի հարավ, և հասանելի է մեքենայով: Նախկին եկեղեցուց արևմուտք գտնվող բլրի վրա կա հին դարաշրջանի մեծ տապանաքարերով հսկա գերեզմանոց:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Ծպնի

7-10-րդ դարեր

Նկարագրությունն ու նշանակությունը

Ծպնիի խաչաձև գմբեթավոր տիպի եկեղեցին չի հիշատակվում պատմական աղբյուրներում, չնայած նրա որոշ ճարտարապետական լուծումներ հետաքրքրություն են առաջացրել քսաներորդ դարի սկզբում: Հատկապես արժանի են հիշատակման առյուծի և ցլի մեծածավալ պատկերաքանդակները, որոնց գոյության մասին վկայում են միայն լուսանկարները: Խաչաձև գմբեթավոր տիպին պատկանող եկեղեցու հորինվածքը լայն տարածված է յոթերորդ դարի հայկական եկեղեցաշինության մեջ, սակայն քանդակազարդ պատուհանների հորինվածքը թույլ է տալիս այն համեմատել տասներորդ դարի Անիի դպրոցի գործերի հետ:

Վիճակը

Գյուղի հնաբնակների վկայությամբ՝ եկեղեցին քանդվել է 1935 թ. տեղի ունեցած երկրաշարժից: Այնուհետև այն վերանորոգվել է և վերածվել մզկիթի, սակայն պահպանվում են արտաքին պատերին եղած քանդակներն ու արձանագրությունը: Հուշարձանը պահպանելու նպատակով, գյուղացիները վերջերս այն նորոգել են՝ փայտով պատելով ներսը, սակայն կից գերեզմանոցի մի մասը ոչնչացվել է ճանապարհի շինարարության ընթացքում:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 3-րդ խումբը միջամտություն չի պահանջում:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Քիլիտաշի, Դիգորի շրջան
N 40.216853, E 43.660681

Բագարան հնագույն բնակավայրը տեղակայված է Ախուրյան գետի արևմտյան ափին՝ Անիից դեպի հարավ-արևելք և Մրենից 4-5 կմ հեռավորության վրա՝ Քիլիտաշի գյուղում, Կարսից 6 կմ դեպի արևելք Իգդիրի ճանապարհով: Բնակավայրի արևելյան ծայրին կանգնած է եղել Սուրբ Թեոդորոս եկեղեցին: Մեկ այլ եկեղեցի, որը, հավանաբար, կառուցվել էր տասներորդ դարի վերջին, և որի մասին հայտնի է տասնիններորդ դարի ճարտարապետ Թորոս Թորամանյանի նկարագրությամբ, գտնվել է բերդի տակ՝ բնակավայրի արևմտյան մասում: Բերդի հյուսիսային եզրին՝ բարձրադիր ժայռի վրա, գտնվում է տասնիններորդ դարի եկեղեցի: Գետի դիմացի ափի ժայռեզրին՝ սահմանի հայկական հատվածում, պահպանվել է միջնադարյան մի եկեղեցի:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Բագարան

Մ.թ.ա. 3-րդ դար – 19-րդ դար

Նկարագրությունն ու նշանակությունը

«Բագարան» անվանումը, ենթադրաբար, ծագում է քաղաքում նախաքրիստոնեական շրջանում եղած պաշտամունքային կենտրոնից, որը թվագրվում է մ.թ.ա. երրորդ դարով: «Իշխան Հայոց» տիտղոսը ստանալուց հետո Աշոտ Մսակեր Բագրատունին այստեղ է հիմնել իր նստավայրը: Իններորդ դարի ընթացքում Բագարանը հանդիսացել է Հայաստանի միջնադարյան կարևոր հոգևոր և վարչական կենտրոններից մեկը, ինչպես նաև՝ այստեղ է եղել Բագրատունիների տոհմական դամբարանը: Բագարանի ամենահայտնի կառույցը եղել է Սուրբ Թեոդորոս եկեղեցին (624–631 թթ.), որն ամբողջությամբ ոչնչացվել է:

Վիճակը

Բնակավայրի հնագուն ժամանակաշրջանի հրաշքով պահպանված մեծ թվով պատեր մնացել են կանգուն՝ օգտագործվելով, ամենայն հավանականությամբ նաև միջնադարյան ժամանակաշրջանում: Որոշ քարերի վրա նկատելի են խաչապատկերներ: Սուրբ Թեոդորոս եկեղեցին գրեթե ամբողջությամբ ավերված է, իսկ փլատակներում նկատելի են երկտակ շարվածքով պատեր: Տասներորդ դարի մյուս եկեղեցին չի պահպանվել, իսկ տասնիններորդ դարի եկեղեցու կանգնուն պատերին ագուցված են տասներեքերորդ դարի մեծ ու նրբագեղ խաչքարեր:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 3-րդ խումբը միջամտություն չի պահանջում: Բագարանի արևմտյան մասում պահպանված բերդը հիմնականում կանգուն է, չնայած միջնադարյան քաղաքի կառույցների մնացած մասը հնագիտական հուշարձան է: Անհրաժեշտ է հնագիտական ուսումնասիրության ենթարկել ամբողջ տարածքը, բնակավայրը և բերդը: Բնակավայրն ու բերդը չափագրված չեն եղել, իսկ բերդի ու տասնիններորդ դարի եկեղեցու փլատակները կարիք ունեն ամրակայման: Սուրբ Թեոդորոսի փլատակները նույնպես պեղման ու ամրակայման կարիք ունեն:

Արգինա

10-րդ դար

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Կայաքյորփյու, Ակյակայի շրջան
N 40.720234, E 43.643421

Արգինա հնագույն բնակավայրը գտնվում է Անիից դեպի հյուսիս-արևմուտք 24 կմ հեռավորության վրա՝ Կայաքյորփյու գյուղի մոտ: Այստեղ կարելի է հասնել մեքենայով՝ «D060» ճանապարհով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը
Տասներորդ դարում Արգինան եղել է Բագրատունյաց թագավորության կարևորագույն կենտրոններից մեկը: Կաթողիկոս Անանիս Մոկացու օրոք կաթողիկոսարանը Աղթամար կղզուց տեղափոխվել է Արգինա և այստեղ մնացել մինչև 1001 թ. Անի տեղափոխվելը: Ստեփանոս Տարոնացու (Ասողիկ) վկայությամբ, Արգինայի Մայր տաճարի և մյուս երեք եկեղեցիների կառուցումը, ինչպես նաև կաթողիկոսական նստավայրի վերակառուցումը իրականացվել է Տրդատ ճարտարապետի կողմից:

Վիճակը
1950-1960 թթ. ընթացքում եկեղեցին գրեթե ամբողջությամբ քանդվել է: Պահպանվել է հյուսիսային խորանի մի մասը, իսկ մնացած քարաբեկորների վրա կարելի է նկատել զարդաքանդակների բեկորներ: Տեղի բնակիչները փորձել են կանխել եկեղեցու ոչնչացումը, քանի որ այդ ժամանակ եկեղեցին օգտագործվել է հարդ պահելու նպատակով, և որոշ պնդումների համաձայն՝ տարածքը կարող էր տեղավորել ընդհուպ մինչև 300 տոննա խոտ: Ներկայումս այստեղ առկա է ձիթհան:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը
Թվացանցի 3-րդ խումբը միջամտություն չի պահանջում: Եկեղեցին, իրականում, գոյություն չունի, սակայն ցանկալի կլինի իրականացնել հնագիտական ուսումնասիրություն:

Արջո Առիճ

10-րդ դար

Նկարագրությունն ու նշանակությունը

Հավանաբար, վանքը հիմնադրվել է Բագրատունիների ժամանակաշրջանում, սակայն պահպանվող արձանագրությունների վրա առկա ամենավաղ թվականը 1207 թ. է: Անիում ամբողջությամբ ընդօրինակված հայտնի միակ Հաղբատի ավետարանը (1211 թ.) Սահակ քահանայի կողմից նվիրաբերվել է Արջո Առիճ վանքին, ով նշում է, որ իր նախնիներն այստեղ եկեղեցի են կառուցել:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ալաջա, Դիգորի շրջան
N 40.484641, E 43.490119

Եկեղեցու ավերակները գտնվում են Ալաջա (հնում՝ Արջո Առիճ) գյուղի տարածքում՝ Անիից դեպի արևմուտք 7 կմ և Ուչբյուլյուք գյուղից 2,5 կմ հեռավորության վրա: Վանքի մնացորդները գտնվում են Արջո Առիճ լեռան (հետագայում՝ Ալաջա) արևելյան լանջին՝ փոքր կիրճի եզրին: Քանի որ այս վայրը գտնվում է գյուղի տարածքում, այստեղ հեշտությամբ կարելի է հասնել մեքենայով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

Վիճակը

Արջո Առիճը վերածվել է ավերակների, որոնց մնացորդները երևում են դեռևս պահպանված կիսականգուն վանքի կողքին: Այնուամենայնիվ, կան գանձագողության բազմաթիվ հետքեր և նրանց մասին պատմություններ:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 3-րդ խումբը միջամտություն չի պահանջում: Շինությունները քանդվել են, և մնացել են միայն փլատակներ ու հատուկենտ խաչքարեր:

Ալաման

7-րդ դար

Նկարագրությունն ու նշանակությունը

Ըստ միատող վիմագիր արձանագրության՝ Ալամանի եկեղեցին կառուցվել է Գրիգոր եղուստրի (իշխանական աստիճան) և նրա կին Մարիամի կողմից՝ Հերակլես կայսեր կյանքի 27-րդ տարում՝ Շիրակ և Արշարունիք գավառների տեր Ներսեհի և Թեոփիղոս Արշարունյաց եպիսկոպոսի ժամանակ: Այս արձանագրությունը եղել է խորանի հարավային մասում՝ խորանի լուսամուտի հիմքի հետ նույն մակարդակի վրա:

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Ալեմ, Դիգորի շրջան
N 40.427357, E 43.509935

Ալեմ (հնում՝ Ալաման) գյուղը գտնվում է Ալաջա սարի հարավային լանջին՝ Անիից դեպի հարավ, Դիգոր տանող հին ճանապարհի վրա, Ուչբյուլյուք բնակավայրից 7 կմ հարավ-արևմուտք և հասանելի է մեքենայով՝ Քյոսելեր գյուղի միջով: Կառույցը չի հայտնաբերվել, սակայն եթե գտնվեր գյուղի մեջ, ապա այն կլիներ Դիգորից դեպի հյուսիս-արևելք 11 կմ հեռավորության վրա՝ Կարս-Իգդիր ճանապարհից դեպի ձախ:

ՀԱՇՎԱՌՎԱԾ ՉԷ

Վիճակը

Եկեղեցին գոյություն է ունեցել մինչև քսաներորդ դարի սկիզբ՝ չնայած շքամուտքերին և ճակատներին հասցված որոշ վնասներին և տանիքի բացակայող մասերին: 1960-ականներին ընթացքում եկեղեցին ոչնչացվել է, և ներկայումս գրեթե ոչինչ չի մնացել:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 3-րդ խումբը միջամտություն չի պահանջում: Եկեղեցու գտնվելու վայրի մասին տեղացիների հայտնած տեղեկությունները հակասական են:

Ագարակ

5-7-րդ դարեր

ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Դերինյոզ, Դիգորի շրջան
N 40.371463, E 43.371209

Ագարակ հնագույն բնակավայրը գտնվում է Դիգոր գետի կիրճի մոտ, Նախիջևան գյուղի և Դիգորի միջև ընկած հնագույն ճանապարհի վրա: Ագարակ կարելի է հասնել մեքենայով, քանի որ այն մոտ է Դիգորից դեպի Դերինյոզ գյուղ տանող ճանապարհին: Որպես այլընտրանք՝ Խծկոնքից կարելի է քայլելով հասնել կես ժամում, նույն հնագույն ճանապարհով:

ՀԱՇՎԱՌՎԱԾ Է

Նկարագրությունն ու նշանակությունը

Ագարակը եղել է վաղ քրիստոնեության շրջանի համալիր, որը բաղկացած էր երկու եկեղեցուց՝ միանավ բազիլիկից և Սուրբ Ստեփանոս Նախավկա քառախորան եկեղեցուց: Գյուղում կան հնագույն շինությունների մի քանի մնացորդներ: Ոմանց կարծիքով՝ այս վայրում եղել են մինչ Բագրատունյաց շրջանին պատկանող ամրոց և բնակավայր:

Վիճակը

Այսօր երկու եկեղեցիներն էլ քանդված են, և պահպանված բեկորները ցրված են ամբողջ տեղանքով: Դիգորից դեպի Դերինյոզ տանող ճանապարհի մոտ գտնվող դաշտում դեռևս նկատելի են որոշ հիմնապատեր: Համալիրից դեպի արևմուտք գտնվող լանջի վրա դեռևս պահպանվում է հնագույն գերեզմանադաշտ՝ առանձին շիրմաքարերով: Պահպանված հիմնապատերի մոտ առկա են գանձագողության հետքեր:

Հրատապությունն ու առաջարկվող գործողությունը

Թվացանցի 3-րդ խումբը միջամտություն չի պահանջում: Հավանաբար, հին եկեղեցու քարերն օգտագործվել են մոտակա Դերինյոզ գյուղի կառուցման համար: Հետագայում կարող է օգտակար լինել գյուղի կառույցների պատերի զննումն ու ուսումնասիրությունը:

Մատենագիտություն/Գրականություն

- Սամուէլ Անեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1893:
- Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890; Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 126:
- Strzygowski J. Die Baukunst der Armenier und Europa. Bd. Wien, 1918. S. 105–106. Abb. 25, 99–103, 281, 283.
- Стржиговский Й. Архитектура армян и Европа (рус. перевод). Т. 1. Книга 1. Ереван, 2011, с. 127–129. Рис. 25, 99–103.
- Թորամանյան Թ., Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942, էջ 310–311, նկ. 231:
- Токарский Н.М. Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961. — 486 с.
- Cuneo P. L'architettura dell scuola regionale di Ani nell'Armenia medievale. Roma, 1977.
- Азатян Ш.Р. Порталы в монументальной архитектуре Армении IV-XIV вв., Ереван. 1987. Ил. 119.
- Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992. էջ 206, 239–240, նկ. 55:
- Thierry J.-M., Donabedian P., Thierry N. Les arts arméniens. Principaux sites arméniens. Paris, 1987. p. 558–559.
- Sinclair T. A. Eastern Turkey: an Architectural and Archaeological Survey, V.1, London, 1987.
- Асратян М. М., Уничтожение памятников армянской архитектуры, Армянский вопрос. Энциклопедия / Под ред. К. С. Худавердяна и др., Ереван, 1991, с. 241-242.
- Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 2002, էջ 435; Քալանթար Ա., Հայաստան: Քարե դարից միջնադար. Շրջան Տեկորի արշավախմբի, Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 157–165:
- http://www.virtualani.org/khtzkonk/index.htm.
- Robert Bevan, «The Destruction of Memory», pages 56—59. 2006, 240 pages, ISBN 1-86189-205-5 (see also in: http://www.press.uchicago.edu/Misc/Chicago/1861892055.html).

Հղումներ

- Ալիշան Ղ., Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855, էջ 126–131:
- Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 113:
- Էփրիկեան Ս. , Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, հատոր 1, 1903, էջ 177–181:
- Strzygowski J. Die Baukunst der Armenier und Europa. Bd. Wien, 1918, p.104–106.
- Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. 1, Երևան, 1942, էջ 310-311:
- Թորամանյան Թ., Հայկական ճարտարապետություն, հատ. 2, Երևան, 1948, էջ 131:
- Токарский Н. М. Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961, с. 197, 208, 217.
- Thierry J.M., Notes sur des monuments arméniens en Turquie, in REA, II, Paris, 1965, p. 170.
- Халпахчян О.Х., Архитектура Армении. Всеобщая история архитектуры, Ленинград. Москва. 1966, с. 225, 237–238, 244.
- Costa E., Schede degli edifice, Roma, Architettura medievale armena, Roma, 1968, p.117.
- Khatchatryan A., Inscriptions et histoire des eglises armeniennes, Recerca sull'architettura armena-8, Milano, Roma, 1974, p.71.
- Paolo Cuneo, L'Architettura della scuola regionale di Ani nell'Armenia medieval, Roma, 1977, p.16–18.
- Հայկական Սովետական հանրագիտարան, հատ. 5, Երևան, 1979, էջ 55-56:
- Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 2, Երևան, 1988, էջ 740– 742:
- Paolo Cuneo and coauthors, Architettura Armena, Roma, 1988, p. 638-641.

Ինտերնետային կայքեր

- Sim, Steven. "VirtualANI – Dedicated to the Deserted Medieval Armenian City of Ani".
- VirtualANI. Archived from the original on January 20, 2007. Retrieved January 22, 2007.
- Google Maps, etc.

Հավելված Ա. Խծկոնքի վանքի գնահատումը

«Ա*նիի համապեքսում*» խմբի անդամները որոշեցին, որպես փորձնական տարբերակ, ընտրել Խծկոնքը, որը բաղկացած է հայտնի Սուրբ Սարգիս եկեղեցուց և իններորդ դարից մինչև տասնմեկերորդ դարերով թվագրվող վանական համալիրի մնացորդներից: Համալիրը գտնվում է Դիգորից դեպի արևմուտք 2-ից 3 կմ հեռավորության վրա՝ կիրճի բարձրադիր հրվանդանի եզրին: Խծկոնք կարելի է հասնել նաև Ագարակ գյուղից ոտքով տանող հին ճանապարհով՝ մոտ կես ժամում, և այսպիսով իր բարենպաստ դիրքի շնորհիվ այն կարող է ապագայում դառնալ զբոսաշրջային երթուղի:

Խմբի անդամների բազմաոլորտ փորձառությունն ու գիտելիքները առավելագույնս օգտագործելու նպատակով խումբը բաժանվեց հետևյալ ոլորտների՝

1) ճարտարապետություն և շինարարական տեխնիկա,
2) արվեստ, ներքին հարդարանք, որմնանկարչություն, պատկերագրություն, վիմագրություն,
3) հնագիտություն,
4) պատկանելություն, հասանելիություն, զբոսաշրջություն, տեղական մշակութային հարցեր

Հուշարձանների համաշխարհային հիմնադրամն առաջարկեց համակարգել զեկույցի մշակման աշխատանքները և տրամադրեց Նյու Յորքում ստեղծված FTP (Ֆայլերի փոխանցման համակարգ) կայքը, որտեղ հաջորդող մի քանի ամիսների ընթացքում մասնակիցները կարող էին նյութեր վերբեռնել և կիսվել: Արդյունքներն այնուհետև խմբագրվեցին և միավորվեցին սույն զեկույցի մեջ: Ապագայում, ենթադրվում է, որ խումբն իր համատեղ փորձառությունն օգտագործելով կկազմի նմանատիպ զեկույցներ տարածաշրջանի մյուս վայրերի վերաբերյալ

Ա. Պատկանելություն և հասանելիություն

Գտնվելու վայրը՝ Դիգոր, Կարս, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1,754 մետր, N 40.380384, E 43.376399 Խծկոնքը գտնվում է Անիից դեպի հարավ-արևմուտք 25 կմ հեռավորության վրա, Դիգորի մոտ:

Պատկեր 1:

Հասանելիությունը

Ներկայումս մեքենայով Խծկոնք հասնել հնարավոր չէ, սակայն կա հիմնականում երեք երթուղի (Պատկեր 1): Առաջին տարբերակը՝ ոտքով Դիգորի քաղաքային կենտրոնից, կիրճով դեպի արևմուտք մոտավորապես 4,5 կմ գնալն է: Ճանապարհի առաջին հատվածն անցնում է դաշտով, իսկ մնացածը բարձրանում է վերև՝ դեպի կիրճի աջ ափը: Դաշտի միջով որևէ ճանապարհ կամ արահետ գոյություն չունի: Երկրորդ տարբերակը՝ կարելի է գնալ Դագփինարի և Դիգորի միջև ընկած լեռնային արահետով: Այս բանարդիր արահետը գրեթե չի երևում և առանձին հատվածներում փակված է թափված քարերով: Մոտենալու դժվարության աստիճանը՝ միջինից դեպի բարձր շրջակայքում է: Հասանելիությունը նաև սահմանափակվում է սեզոնային պայմաններով: Վերջին տարբերակը՝ Խծկոնքից դեպի հարավ գտնվող Ագարակ հնագույն բնակավայրից մոտենալն է: Իջնելն ավելի դժվար է, սակայն այսպես ուղևորության ընդհանուր տևողությունը զգալիորեն կրճատվում է:

Պատկեր 2:

Պատկեր 3:

Պատկանելությունը

Հուշարձանը պատկանում է վարչապետարանին կից գանձապետարանի ենթաքարտուղարությանը, իսկ պատասխանատվությունը դրված է մշակույթի և զբոսաշրջության հարցերի նախարարության վրա: 1989 թ. մարտի 17-ին գրանցվել է «Բեշլար քիլիսե» անվամբ: Հուշարձանի ամրակայման/վերականգնման ծրագրերի հաստատման համար լիազոր մարմին է հանդիսանում Ամրակայման հարցերով Կարսի տարածաշրջանային վարչությունը:

Բ. Պատմություն և նկարագրություն

Վանքի առաջին՝ Սուրբ Կարապետ (Հովհաննես Մկրտիչ) եկեղեցին կառուցվել է հետարաբական ժամանակաշրջանում: Ամենավաղ արձանագրությունը թվագրվում է 1001 կամ 1006 թվականով, որտեղ նշվում է Գագիկ Շահնշահ Բագրատունու կնոջ՝ Կատրանիդեի անունը: Ըստ Սամվել Անեցու (տասներկուերորդ դար)՝ Սուրբ Սարգիս եկեղեցին կառուցվել է 1024թ. Վեստ Սարգիս իշխանի կողմից:

Վանական համալիրը բաղկացած է հինգ եկեղեցուց, որոնք բոլորն էլ եղել են խնամքով շարված սրբատաշ քարով գմբեթավոր կառույցներ: Այդ եկեղեցիներն են՝ Սուրբ Կարապետ, Սուրբ Աստվածածին, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Գրիգոր և Սուրբ Սարգիս: Այսօր կանգուն է մնացել միայն Սուրբ Սարգիս եկեղեցին:

Ճարտարապետական գլուխգործոց հանդիսացող Սուրբ Սարգիս եկեղեցին (1024 թ.) չորս անկյունային ավանդատներով քառախորան կառույց է՝ արտաքինից վերցված շրջանաձև ծավալի մեջ: Գմբեթատակ լուծումը իրականացված է առագաստների միջոցով: Եկեղեցու ներսում՝ պատերի և ծածկերի հատման մասում, ամբողջ պարագծով ձգվում է պլոֆիլավորված լայն եզրագոտին: Արտաքին հորինվածքը կազմված է երկու բազմանիստ ծավալներից: Ստորին հատվածը դրված է բարձր գետնախարիսխի վրա, որը ավարտվում է հորիզոնական քիվով:

Պատերն իրականացված են կրկնակի և նրբագեղ սյունա-կամարային համակարգով, որը կառույցը բաժանում է քսան հատվածների: Տասներկու նիստանի բարձր թմբուկը շրջապատված է եռյակ որմնասյուներով, որոնք կարծես պահում են հովհարաձև վեղարի լայն քիվը: Բոլորակ այս կառույցի ամբողջ հորինվածքը, այդ թվում՝ գետնախարիսխը, չպահպանված շքամուտքն ու հարդարանքը, արտացոլում են հայկական դասական վաղ քրիստոնեության շրջանի գերիշխող ազդեցությունը Անիի տասնմեկերորդ դարասկզբի ճարտարապետական դպրոցի վրա:

Սուրբ Սարգիս եկեղեցուց դեպի հյուսիս եղել է կոթող-հուշարձան, որի կամարակապ որմնախորշում կար մի խաչքար: Այն կանգնած է եղել բարձր պատվանդանի վրա: Հուշարձանն իր հորինվածքով թվագրվում է 1020-1030 թթ.:

Պատկեր 4:

Խծկոնքի վանքը գործել է մինչև մոնղոլական արշավանքները (1236–1244 թթ.), իսկ այնուհետև լքված մնացել վեց դար շարունակ: Վանքին արևմտյան և հարավային օժանդակ շինությունները կառուցվել են ուշ շրջանում: Քսաներորդ դարի սկզբին արված լուսանկարները փաստում են, որ դրանք բավական համեստ, տանիքի վրա բացակա հատվածներ ունեցող և այդ պահին վատթար վիճակում գտնվող կառույցներ էին:

Կարսի տարածաշրջանի ռուսական նվաճումից հետո (1878 թ.) Խծկոնքը վերադարձվել է Հայ եկեղեցուն: Շինությունները նորոգվել են, իսկ վանքում կրոնական կյանքը վերսկսվել է: Խծկոնքը շարունակել է օգտագործվել մինչև 1920թ. (Պատկեր 3): 1892–93 թթ. ընթացքում եկեղեցիների հիմնական խմբից դեպի հարավ և արևմուտք լրացուցիչ հարմարություններ են կառուցվել վանականների և ուխտավորների համար:
1950 թ. վանքը միտումնավոր քանդվել է: Վանական կառույցներն ու չորս եկեղեցիները գրեթե ամբողջությամբ անհետացել են, և այսօր մնացել է միայն Սուրբ Սարգիս եկեղեցին (Պատկեր 4):

Գ. Ճարտարապետական գնահատում

«Յաւուրս սորա մեծապատիւ Վեստն Սարգիս զկնի բազում շինուածոյ բերդից եւ եկեղեցեաց շինեաց եւ զփառաւոր վանքն զԽցկօնսն...»:

—Կիրակոս Գանձակեցի, 13-րդ դար

Սուրբ Սարգիսը Խծկոնքի վանական համալիրի պահպանված միակ եկեղեցին է, որը Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանի (10-11-րդ դդ.) հայկական մոնումենտալ զարդարվեստի ձևավորման լավագույն օրինակներից է: Այս բոլորակ կառույցի առաջին հատվածը պատված է նեղ կամարաշարերով, որոնք հենված են բարձր գետնախարսխի վրա կանգնած բարակ և նուրբ զույգ որմնասյուների վրա (Պատկեր 5):
Երկրորդ մակարդակը համահունչ է նշված հարդարանքային լուծմանը, սակայն փոքր որմնասյուները միանում են եռանկյունաձև ճակտոններին (Պատկեր 6), որը համահունչ է վեղարի հովհարաձև կառուցվածքին: Վերջինս իրենից ներկայացնում է վեղարի հազվադեպ հանդիպող հովհարաձև տիպ՝ վկայելով եկեղեցու կարևոր կոնցեպտուալ կապը պահպանված այնպիսի նմուշների հետ, ինչպիսին է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցին:

Եկեղեցու մանրամասն մշակված կամարաշարերը տասներորդ և տասնմեկերորդ դարերի համար հարդարանքային նորարարություններից են: Նման զարգացումները կարող են ընկալվել ճարտարապետական կապի մեջ, որոնք, մասնավորապես, առկա են Անիի Մայր տաճարում, որտեղ հուշարձանը նման կերպ պատված է փոքր որմնասյուների և կամարաշարերի համակարգով: Յոթերորդ դարի հուշարձանների, մասնավորապես՝ Մրենի տաճարի համեմատ, Անիի Մայր տաճարը և նրան սերնդակից այլ հուշարձաններ, օրինակ՝ Խծկոնքը, ավելի ուշագրավ են իրենց արտաքին հարդարմամբ, որը կատարված է ճարտարապետական ձևերի ներդաշնակությամբ:

Պատկեր 5:

Այս առումով, կարող ենք նկատել, թե ինչպես են ճարտարապետության տարրերը՝ սյուները, խոյակները, կամարներն ու խարիսխները, սկսում խոսել հարդարանքի լեզվով:
Խծկոնքը վերոնշյալ ճարտարապետական լուծումները ներառող պահպանված բոլորակ կառույցի կարևորագույն մի օրինակ է: Կամարաշարերի և ճակտոնների համադրմամբ այն այս տիպի ցայտուն օրինակ է: Այստեղ հիշատակման են արժանի Սուրբ Սարգիս եկեղեցու հարդարման երկու այլ հատկանիշներ ևս: Առաջինը՝ թե՛ ներսի և թե՛ դրսի կողմից առկա սյուների խոյակներն են: Եկեղեցու առաջին մակարդակի սյունախոյակները պսակվում են չորս կլոր աբակներով, որոնք պրոյեկտված են եկեղեցու բոլորաձև արտաքինից մակերեսին (Պատկեր 7): Աբակի ձևը կարելի է դիտարկել որպես հոնիական խոյակի ոճաբանական զարգացում, որը հանդիպում է նաև հայկական պաշտամունքային ճարտարապետության այլ նմուշներում: Խոյակի մեկ այլ ձև, որն ավելի մոտ է հոնիական օրդերին, որից նա ծագել է, կարելի է հանդիպել Անիի այժմ ավերված Գագկաշեն եկեղեցու խոյակների կատարման մեջ:

Պատկեր 6:

Պատկեր 7:



Պատկեր 8:

Սուրբ Սարգսի ներքին հարդարանքի առաջին հատվածը՝ մինչև պատուհանների վերին նիշերը, շրջապատված է շարունակական և նուրբ երիզված քիվով, որն իր հերթին ընդհատվում է պատուհանի կամարներով (Պատկեր 8): Սրանք կրում են արտաքին երեսին առկա կամարաշարերի և խոյակների հարդարանքային նույն լուծումները: Սակայն այս երկու գոտիները չեն իջնում մինչև եկեղեցու հատակի մակարդակ: Սրանք նման են այնպիսի կամարների, որոնք, պատի վրայով ձգվելով դեպի ներքև, ավարտվում են կես ճանապարհին: Նման ներքին հարդարանքի լուծումը տպավորիչ տեսողական մի հնարք է, որի նպատակը ուշադրություն գրավելն է ոչ միայն պատուհանների ներքին տեսքի, այլև առավելապես շրջակա գրավիչ համայնապատկերի վրա:

Եկեղեցու արտաքին երեսը պատված է արձանագրություններով, որոնք վկայում են ինչպես վանքում իրականացված բազում նորոգումների, այնպես էլ վանքին արված նվիրատվությունների մասին (Պատկեր 9): Այս արձանագրությունները կարևոր են նրանով, որ վկայում են տարածաշրջանի վերնախավի սոցիալական, քաղաքական և տնտեսական փոխադարձ կապերի մասին և անմիջական իմաստ հաղորդում «Անին կոնտեքստում» հասկացությանը: Օրինակ՝ արձանագրություններից մեկը վկայում է «աստծո ծառա» ոմն Բռնավորի և նրա կողակից՝ Տղա տիկնոջ կողմից Մրենի Աղտոտն անվամբ խաղողի այգիներից մեկը վանքին նվիրաբերելու մասին: Հետևելով առնվազն վեցերորդ դարից եկող հայկական ճարտարապետական ավանդույթին՝ վիմագիր արձանագրությունը արված է արտաքին երեսի վրա, այլ ոչ թե կառույցի ներսում: Արձանագրությունները, ինչպես Անիում, տեղադրված են արտաքին կողմի դեկորատիվ սյունա-կամարաշարերի արանքում: Նման սյուներն իբրև գրության շրջանակ օգտագործելը կրկնում է հայկական մանրանկարչության մեջ տարածված կանոնների աղյուսակների (խորան) տևական ավանդույթը: Խծկոնքում առկա վիմագրերը ավելի շատ հիշեցնում են ձեռագրերի մանրանկարչական կատարման մասին՝ պահպանելով նաև գունագեղ հարդարանքը՝ գրություններն ընդգծված են կարմիր և սպիտակ ներկերով: Սա վիմագիր արձանագրության վրա պահպանված բազմագունության գեղեցիկ հազվագյուտ նմուշներից է, որն արժանի է մանրակրկիտ ուսումնասիրության:

Պատկեր 9:

Ամփոփելով Խծկոնքի Սուրբ Սարգիս եկեղեցու ճարտարապետական գնահատումը՝ պետք է նշել, որ այն կրում է հայկական միջնադարյան ճարտարապետության մեջ, հարդարանքի և վիմագրության զարգացման կարևոր օրինաչափությունները:

Դ. Կառուցվածքային գնահատում

Իրականացվել է Խծկոնքի վանքում կանգուն մնացած Սուրբ Սարգիս եկեղեցու տեսողական գնահատում: Գնահատման աշխատանքն ամբողջությամբ կատարվել է միայն գետնի և շրջակա դաշտի վրայից:

Տարածքի սեյսմիկությունը

Թուրքիան գտնվում է Ալպ-Հիմալայան երկրաշարժային գոտում, որը ձգվում է Ազորյան կղզիներից մինչև Հարավարևելյան Ասիա: Հյուսիսանատոլիական երկրակեղևային խզվածքային գոտին տարածվում է Թուրքիայի հյուսիսային մասում՝ արևելք-արևմուտք ուղղությամբ և բավականին ակտիվ է: Թուրքիայի հյուսիս-արևելքում կողմնակի խզվածքներ կան՝ սկսած Հայաստանի տարածքում՝ Սևանի շրջանից, իսկ Թուրքիայի տարածքում՝ Բալըքգյոլում, Իգդիրում, Աղրիում, Դումլուում, Զոբանդեդեում, Կաղըզմանում և Դիգորում:



Պատկեր 10:

Հանրային աշխատանքների և բնակավայրերի գործերի նախարարությունը 1996 թ. հրապարակել է Թուրքիայի սեյսմիկ վտանգավորության քարտեզը՝ ըստ ուժգնության առավելագույն աստիճանի (Պատկեր 10): Կարս քաղաքը, այս քարտեզի համաձայն, գտնվում է երկրորդ կարգի վտանգավորության սեյսմիկ գոտում, ինչը նշանակում է, որ այստեղ հնարավոր է 0.4–0.3 գ (ծանրության ուժի արագացման միավոր) առավելագույն ուժգնություն:

1924 թ. սկսած, տարածաշրջանում գրանցվել են ավերիչ և կիսաավերիչ տասը երկրաշարժեր: Առաջինը տեղի է ունեցել 1924 թ. մայիսի 13-ին, որից տուժել է Կարսից հարավ-արևմուտք գտնվող Սարիղամիշ քաղաքը: Ամենահուժկու երկրաշարժը՝ 6,2 մագնիտուդ հզորությամբ, եղել է Դիգորում 1935 թ. մայիսի 1-ին: Այս երկրաշարժը վնասել է 50 կմ շառավղում գտնվող բոլոր շինությունները[1]: Համաձայն մամուլի հաղորդագրության, քանդվել են բոլոր տները, ծայրաստիճան վնասվել են հուշարձանները, եղել են մեծ թվով զոհեր ու վիրավորներ: Դիգորն ու շրջակա տարածքը այնուհետև ենթարկվել են 10 հետցնցումների[2]: Դիգորում մի շարք երկրաշարժեր են տեղի ունեցել նաև 1936, 1938, 1941, 1962, 1972, 1975, 1976 և 1983 թթ.: Շրջանը լրջորեն վնասվել է նաև Սպիտակի 1988 թ. երկրաշարժից: Այս երկրաշարժերի ուժգնությունը տատանվել է 4.5-ից մինչև 6.9 M_S (մակերևույթի ալիքի մեծություն)[3]: Զվերանորոգված և անխնամ տներն ամբողջությամբ փլուզվել են այս երկրաշարժերի արդյունքում[4]: Այս տարածքում հաճախակի են նաև սողանքներն ու քարաթափությունները:

Պատկեր 11:

Կառուցվածքային նկարագրություն

Ս. Սարգիս եկեղեցին երկու փոխուղղահայաց առանցքներով համաչափ ձևով բաժանված քառախորան կառույց է: Կառույցը բաղկացած է ութ թաղածածկ հատվածներից, որոնցից չորս ավանդատների խորանները նայում են դեպի արևելք՝ գտնվելով գետնի մակարդակից մեկ աստիճան բարձր: Կառույցի կենտրոնում բարձրանում են թմբուկը և արտաքինից հովհարաձև տանիքով վեղարը: Կառույցի առաջին մակարդակը մինչև թմբուկի ստորին գոտին պարագծով վերցված է ծածկի տակ: Թմբուկն ու գմբեթը ներսից ունեն, համապատասխանաբար, գլանաձև և սֆերիկ ծավալային հորինվածք:

Եռաշարք քարե գետնախարիսխն արևելյան կողմում նստած է կոպտատաշ քարերով շարվածքի վրա (Պատկեր 11): Անտիկ ժամանակաշրջանում, սեյսմիկ գոտում աշխատող շինարար վարպետները սովորություն են ունեցել խուսափել հիմնապատերն անմիջապես ժայռաքարի վրա դնելուց՝ երկրաշարժի ժամանակ ցնցման փոխանցումից խուսափելու համար: Կա ենթադրություն, որ եռաշերտ քարերի այս համակարգն իրականացվել է կառույցի հիմքի ողջ մակերեսով՝ ծառայելով որպես

1 Հանրային աշխատանքների նախարարություն, «Աղետների վիճակը քաղաքներում», *Հանրային աշխատանքների նախարարության հրապարակություն* (թուրքերեն):
2 Թեքիկ Ս., «Կարսի և դրա շրջակայքի երկրաշարժերը» (1924-1941), Պատմագիտական ուսումնասիրությունների միջազգային կենտրոն, 2012 (թուրքերեն):
3 Հանրային աշխատանքների նախարարություն, «Աղետների վիճակը քաղաքներում»:
4 Թեքիկ Ս., «Կարսի և դրա շրջակայքի երկրաշարժերը»:



Պատկեր 12:



Պատկեր 13:

գորգային հիմք, ինչպես դա հայտնի էր հռոմեական, հունական և բյուզանդական հուշարձաններում:

Հուշարձանը կառուցված է հայկական «միդիս» շարվածքով, որն իրենից ներկայացնում է արտաքին երկու կողմերից սրբատաշ քարերով, իսկ միջուկում մնացորդ քարաբեկորների, խճի և կրաբետոնի շինարարական համակցումը: Քարը կարմրավուն է, նման կրաքարին: Նման կրաշաղախը, որն ամենայն հավանականությամբ Թուրքիայում կոչվում է խորասին, գործածվել է նաև բյուզանդական, սելջուկյան և օսմանյան ժամանակաշրջաններում: Խորասին կրաշաղախները կազմված են կրաքարի կապակցանյութից և հրաբխային խարամի ու տուֆի մասնիկներից:

Գնահատումը

Հուշարձանն ունի բազմաթիվ ճեղքեր և չնայած իր գրեթե ամբողջական պահպանված վիճակին՝ որոշ հատվածներում փլուզվել է: Այն լրջորեն վնասված է, ունի քայքայված կոնստրուկտիվ տարրեր, ինչը ծանրության ուժի և հատկապես սեյսմիկ ակտիվության դեպքում ավելի վտանգավոր է:

Արտաքինից առավել նկատելի են եկեղեցու առաջին մակարդակի ստորին հատվածում առկա ութ բացվածքները, որոնք համապատասխանում են չորս խորաններին և նրանց արանքում առկա ավանդատներին (Պատկեր 12): Այս բացվածքներն անցնում են պատերի ամենաբարակ հատվածներով: Սրահի ութ մասից բաղկացած ներքին հատվածների արտաքին միդիս շարվածքի հիմքերում և փլուզվածքների շուրջ սրբատաշ քարերը բացակայում են: Կառույցի առաջին մակարդակի տանիքի քարե որոշ ծածկասալեր բացակայում են, իսկ երկու մակարդակների ծածկերի վրա առկա է բուսականություն: Ներսից նկատելի է, որ խորաններից յուրաքանչյուրի կենտրոնական մասում առկա ուղղահայաց ճեղքերը եկեղեցու առաջին մակարդակը բաժանել են չորս առանձին հատվածների (Պատկեր 13): Հարավային խորանի հատվածը փլուզվել է, իսկ հյուսիսային խորանից ընկել է մեկ քար: Հյուսիսային, արևելյան և արևմտյան խորաններում առկա ճեղքերը բարձրանում են վեր (Պատկեր 14): Չորս խորաններից երեքի ճեղքերը հասել են գմբեթի հիմքին, սակայն ներս չեն անցել (Պատկեր 15): Առաջին մակարդակի հիմքի մոտ բացակայում են ներքին որմնաշարի որոշ հատվածներ (Պատկեր 16): Գմբեթի վեղարին կա անցք: Դիտարկման համաձայն՝ խորաններից յուրաքանչյուրի գմբեթարդին կից թաղածածկերի քարերը թուլացել են և կարող են ընկնել (Պատկեր 17):

Պատկեր14:

Պատկեր 15:

Պատկեր 16:

Պատկեր 17:

Պատկերներ 18–24:

Ե. Լրացուցիչ ուսումնասիրություններ

I. Վիմագիր արձանագրություններ

Խծկոնքի վանքի պատերի արձանագրությունների մասին աշխատություն է հրատարակվել 1864թ. Վենետիկի հայկական Սուրբ Ղազար վանահայր Ներսես Սարգսյանի կողմից (Ն. Սարգիսեան, «Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս», Վենետիկ, 1864, էջ 208–214): Ներկայումս, Սուրբ Սարգիս եկեղեցու պատի վրա առկա է ամբողջությամբ կամ մասնակի պահպանված միայն ութ տեսանելի արձանագրություն, որոնք թվագրվում են հետևյալ թվականներով՝ 1033, 1153, 1211, 1214, 1221, 1230, 1233, և 1240 (Պատկերներ 18-24)

Ամենահին արձանագրությունը պատկանում է Վեստ Սարգսին՝ Սուրբ Սարգիս եկեղեցու կառուցողին (1033թ.), որտեղ նա նշում է, որ ինքը բյուզանդական երեք կայսեր կողմից ստացել է *«անթիպայ պայրիկ, վեստ և դուկ արևելից»* տիտղոսները:

Բացի այդ, արձանագրության համաձայն, նրա կողմից Արաքս գետի ափին տնկած այգին նվիրաբերվել է վանքին: Այս արձանագրությունից պահպանվել են միայն երկու եզրերային հատվածներ, ինչպես դա երևում է Պատկեր 18-ում: Պատկեր 25-ը ներկայացնում է արձանագրության ամբողջական տեքստը, որտեղ կարմիրով նշված են բացակայող մասերը:



Figure 25.

II. Հնագիտություն

Խծկոնքի վանքը չի սահմանափակվում միայն կիրճի վերին եզրում կառուցված հինգ եկեղեցիներով: Այն ներառում է նաև արևմտյան և հարավային կողմերից

Figure 26.

Figure 27.

Figure 28.

Figure 29.

սահմանակցող օժանդակ շինություններ, ինչպես նաև ամբարներ, պատվարներ, մի քանի գերեզմանոց, և ամենայն հավանականությամբ՝ մի շարք քարանձավներ, որոնք օգտագործվել են վանականների կողմից:

Դիտարկումներ զբոսաշրջության ներուժի և համայնքի վերաբերյալ

- Դեպի հովտի մուտքը փռված դաշտերը մշակելի են և բարեբեր, այստեղ հունձն անում են տարին երեք անգամ (Պատկեր 26): Կիրճով դեպի ներքև գտնվող ժայռոտ տեղանքն ու հողային շերտի սակավությունը նպաստավոր չեն գյուղատնտեսական գործունեության համար: Հովիվները ոչխարներ են պահում հուշարձանը շրջապատող քարքարոտ վայրերում: Գետի ջրերում կան ձկներ: (Պատկեր 27)
- Գրվածքները, հրդեհված հատվածներն ու գանձագողությունը սպառնալիք են հանդիսանում պահպանված Սուրբ Սարգիս եկեղեցու համար: Եկեղեցում առկա մոխրի մնացորդները, ամենայն հավանականությամբ, այստեղ են թողել տեղի հովիվները, որն առաջացել է բռնած ձուկը եփելու կամ տաքանալու համար խարույկ վառելիս: Տեղի երիտասարդները հանգիստ բարձրանում են պատերի և գմբեթի վրա, քանի որ չկա անվտանգության ծառայություն կամ վերահսկողություն (Պատկեր 28):
- Հատակին կան գանձագողերի կողմից իրականացված ապօրինի պեղումների հետքեր: Եկեղեցու պատերից մի քանիսը, ամենայն հավանականությամբ, ոչնչացվել են կա՛մ «ոսկի» որոնող գանձագողերի կողմից, կա՛մ պարզապես բարբարոսության արդյունքում (Պատկեր 29):
- 2012 թ. հիմնված «Դիգոր կուլտուր պլատֆորմու» (Digor Kültür Platformu) կազմակերպությունը Սուրբ Սարգիս եկեղեցու պատկերն օգտագործում է որպես իր պատկերանշան, ինչը վկայում է այն մասին, որ այստեղ որոշակի հպարտություն են զգում իրենց բնակավայրի տարածքում առկա մշակութային ժառանգության համար:
- Ճանապարհորդության ընթացքում հանդիպել է դեպի Խծկոնք միայնակ ուղևորվող մի բրիտանացի:

Զբոսաշրջության ներուժը

- Պետք է խրախուսել շրջանի զբոսաշրջության համակողմանի ռազմավարությունը, որով տեղի համայնքին կընձեռնվեն կրթական և կարողությունների զարգացման հնարավորություններ: Սա կարող է ներառել նաև Կարսի տարածաշրջանի շինարարների և արհեստավորների վերապատրաստումը՝ այս կարգի հուշարձանների վրա աշխատելիս ավանդական տեխնիկան օգտագործելու ուղղությամբ:
- Ներկայումս Կարսը զբոսավայր է միայն դեպի Անի այցեր կատարելու և մեկ գիշեր կայանելու համար: Այն պետք է ընդգրկվի առնվազն երեք օր տևողությամբ խմբային փաթեթների մեջ, և տեղական տնտեսությունը պետք է շահի շրջանի տարածքում դեպի այլ վայրեր կատարվելիք այցերից ևս:

Դեպի Խծկոնք և հուշարձաններ տանող հովտի համապատկերն ու գեղատեսիլ վայրերը գրավելու են այստեղ այցելող զբոսաշրջիկների մեծ մասին: Այն կարելի է ներառել զբոսաշրջային փաթեթի մեջ՝ որպես կեսօրյա ճամփորդություն, որը կավարտվի տեղացիների կողմից կազմակերպված համեստ խնջույքով: Ճաշից հետո կարելի է այցելել Դիգորի մոտակայքում գտնվող այլ հուշարձաններ ևս:

Առաջարկություններ

Իր գլանաձև-բազմանիստային տեսքի, համաչափությունների և օգտագործված շինանյութերի շնորհիվ Սուրբ Սարգիս եկեղեցին ապացուցել է իր զարմանալի դիմացկունությունը: Այնուամենայնիվ, մենք եզրակացնում ենք, որ սեյսմիկ ակտիվ գոտում գտնվելու պատճառով այն չունի անհրաժեշտ կառուցվածքային անվտանգություն: Ներկայումս շինությունն ապահով չէ որևէ նպատակի, այդ թվում՝ զբոսաշրջիկների այցելությունների համար, և դեպի հուշարձան մուտքը պետք է արգելվի:

Սուրբ Սարգիս եկեղեցու կամ կորված մյուս եկեղեցիների մանրամասն հաշվառում գոյություն չունի: Ստորև ներկայացված առաջարկությունները ներառում են Սուրբ Սարգիս եկեղեցու համար անհրաժեշտ արտակարգ միջոցառումները, եկեղեցու համակողմանի գնահատումն ու վերանորոգման, ինչպես նաև վանական համալիրի համակողմանի գնահատման ծրագրերը:

Առաջնայնություն 1. Կարճաժամկետ (Արտակարգ միջոցառումներ)

- Սուրբ Սարգիս եկեղեցու առաջին աստիճանի ողջ տանիքը ամրաններով ձգել ՝ պատերի հետագա մասնատումը կանխելու համար:
- Խորանների և թաղածածկերի անկայուն հատվածները ամրացնել փայտե հենակների միջոցով:
- Լրացնել առաջին մակարդակի հիմքից վերև պատերի բացակայող հատվածները:

Առաջնայնություն 2ա. Սուրբ Սարգիս եկեղեցու համակողմանի գնահատում և անհապաղ վերականգնում

Պահանջվում է կատարել հուշարձանի առավել համակողմանի քննություն՝ վերականգնման և ամրակայման համապատասխան տեխնիկական որոշելու նպատակով, որը պետք է ներառի հետևյալը՝

- իրականացնել մանրամասն ճարտարապետական հետազոտություն՝ 3D սկանավորման, ֆոտոգրամետրիայի կամ լազերային տախոմետրի (total station) կիրառմամբ՝ ճշգրիտ հատակագծեր, կտրվածքներ և ճակատներ ստանալու համար:
- ճշտել Սուրբ Սարգիս եկեղեցում առկա բոլոր վնասվածքների և քայքայված հատվածների տեղադրությունն ու չափերը:
- տախոմետրիկ չափագրության հիման վրա կատարել մանրամասն ուսումնասիրություն, գործիքների հետքերը, վարպետների թողած նշանները, պատերի վրա թողնված արձանագրությունները և այլ հատվածներ փաստաթղթավորելու համար, որով ավելի կպարզվի հուշարձանի և համալիրի պատմությունը:
- իրականացնել քարի և կրաշաղախի լաբորատոր հետազոտություններ՝ հուշարձանի ամրությունը պարզելու և հետագա վերանորոգման նյութերն ու տեխնոլոգիաները որոշելու համար:
- Իրականացնել երկարաժամկետ մոնիթորինգ և շրջակա միջավայրի ցուցանիշների տատանումների փորձարկումներ:
- Անդրադառնալ խորանների վրա առկա ուղղահայաց ճեղքերին և առաջին մակարդակի փլուզված ստորին հատվածներին:
- Կազմել վերականգնման և ամրակայման գծագրեր:

Առաջնայնություն 2բ. Տեղանքի հետագա ուսումնասիրումն ու համակողմանի գնահատումը

- Պարզել, թե ինչու է Խծկոնքը կառուցելու համար ընտրվել այս տեղանքը: Ժայռազանգվածը, որի վրա կառուցված է Սուրբ Սարգիս եկեղեցին, փոքր է, իսկ հնում եկեղեցիները հաճախ կառուցվել են այլ շինությունների հետ մեկտեղ: Հնարավոր է, որ այստեղ եղել է ավելի հին քրիստոնեական սրբատեղի: Որպես կանոն, նման սրբավայրերը հետագայում ներառվում էին նոր շինությունների մեջ: Օգտակար կլինի պարզել վանքի և մյուս բնակավայրերի կապը:
- Քարտեզագրել տեղանքի տարրերը՝ ինչպես ստորին, այնպես էլ վերին տարածքները՝ օգտագործելով «GIS» համակարգը:
- Գեորադարային հետազոտությամբ հայտնաբերել մինչև 2 մետր խորությամբ գետնի տակ գտնվող հնագիտական մնացորդները: Դրանով կպարզվի, թե արդյոք այստեղ ավելի մեծ շինության հիմքեր են եղել, ինչպես նաև՝ լրացուցիչ կառույցների գոյությունը: Սա օգտակար նախնական միջոցառում է, քանզի այն չի պահանջում մասնակի բացումներ:
- Հնարավոր է, որ անհարժեշտ լինի «LiDAR» սկանավորումը (լանդշաֆտի սկանավորում ինքնաթիռից)՝ գետնի մակարդակից չերևացող կառույցները տեղորոշելու համար:
- Հաշվառել և փաստագրել հուշարձանից դիտավորյալ հեռու տարված և/կամ հովտում գտնվող

բեկորները: Այս տեղեկությունները պետք է նաև քարտեզագրվեն նախքան բեկորների փաստագրումն ու ուսումնասիրությունը:
- Տեղորոշել, հաշվառել և պահպանության տակ վերցնել քայքայման արդյունքում ցրված առավել նշանակալի քանդակազարդ մնացորդները: Պարզել և նշել, թե արդյոք կան բեկորներ, որոնք կարող էին հայտնվել այլ համալիրներում: Ստուգել, թե արդյոք կան այդ ժամանակաշրջանով թվագրվող այլ վանքեր, որոնք ունեցել են սրբերի նմանատիպ պաշտամունքի դրսևորումներ, և ստուգել, թե որոնք են այդ սրբերին նվիրված առկա մնացորդները:
- Եկեղեցու հյուսիսարևելյան կողմից կարելի է տեսնել քարահիմք, ինչը նշանակում է, որ շինությունների կառուցման համար օգտագործված տարածքը ինչ-որ պահի հարթեցվել է: Անհրաժեշտ է մաքրել եկեղեցու հիմքերը՝ տեղանքի բնույթը, ինչպես նաև այս վայրում շինարարական աշխատանքների հաջորդական ընթացքը պարզելու համար:
- Մաքրել տարածքի մյուս հատվածները՝ այլ շինությունների հիմքեր հայտնաբերելու նպատակով, ինչպես նաև դրանց չափն ու հատակագիծը պարզելու համար: Գտնել բոլոր հոգևոր շինությունների, ինչպես նաև բնակելի և օժանդակ կառույցների հիմքերն ու պատերը:
- Հետազոտել քարերի ստացման աղբյուրը, որտեղ դրանք հղկվել են, և այն հին ճանապարհները, որոնցով դրանք փոխադրվել են շինարարական հրապարակ: Ինչպես նաև՝ պարզել կրաշաղախի պատրաստման վայրը:
- Վանքի կառուցման ժամանակագրությունը հստակեցնելու համար կազմել քանդված շինություններում օգտագործված կրաշաղախի վերլուծություն և այն համեմատել ավելի հին այն եկեղեցիների կրաշաղախի հետ, որոնց թվագրումը միանշանակ հայտնի է:
- Կատարել քանդված շինություններում օգտագործված կրաշաղախի վերլուծություն և այն համեմատել տարածաշրջանի ավելի հին այն եկեղեցիների լուծումների հետ, որոնց թվագրումը միանշանակ հայտնի է:
- Որոշել, թե ինչպես փաստագրել և դասակարգել վանական կառույցների քարերը, որով կհստակեցվի շինությունների կառուցման և վերակառուցումների թվագրումը:
- Հնագիտական աշխատանքների ընթացքում, անկասկած, առաջ են գալու նոր մարտահրավերներ, որոնք պահանջելու են նախագծի վերանայում

Առաջնահերթություն 1-ի ներքո նախատեսված արտակարգ միջոցառումներն իրագործելուց հետո, համոզվելով, որ տեղանքն անվտանգ է Սուրբ Սարգիս եկեղեցու և վանքի տարածքում առկա ավերակների պաշտպանության ու պահպանման համար, պետք է քննարկել այցելության համար վճար գանձելու, ինչպես նաև վանք այցելել ցանկացող զբոսաշրջիկների համար փոխադրման լրացուցիչ երթուղի ստեղծելու հարցը:.

Հավելված Բ. Աշխատաժողովի ծրագիրը և մասնակիցներ

Ծրագիր

Օր 1-ին. 29 սեպտ., կիրակի
- Անի հնագիտական վայր
- Հովվի եկեղեցի և բաղնիքներ

Օր 2-րդ. 30 սեպտ., երկուշաբթի
- Հոռոմոսի վանք
- Տայլարի եկեղեցի
- Կարմիրվանք եկեղեցի

Օր 3-րդ. 1 հոկտ., երեքշաբթի
- Ուղուզլուի եկեղեցի
- Կարմիր վանք եկեղեցի
- Արգինայի եկեղեցի
- Ուզունի եկեղեցի
- Երազգավորս
- Տիգնիսի բերդ

Օր 4-րդ. 2 հոկտ., չորեքշաբթի
- Բուլանըխ
- Բագնայր
- Արջո Առիճ
- Մաղասբերդ
- Անի հնագիտական վայր

Օր 5-րդ. 3 հոկտ., հինգշաբթի
- Տեկորի տաճար
- Խծկոնքի վանք
- Ագարակի եկեղեցի
- Ալաման

Օր 6-րդ. 4 հոկտ., ուրբաթ
- Նախիջևան
- Բագարան
- Ծպնի
- Մրենի տաճար

Օր 7-րդ. 5 հոկտ., շաբաթ
- Ամփոփիչ նիստ, «Բյույուք Կալե» հյուրանոց

Մասնակիցներ

Մշակութային ժառանգության հետազոտությունների նորվեգական ինստիտուտ

- **Կարսթեն Պալուդան-Մուլե,** *Մշակութային ժառանգության հետազոտությունների նորվեգական ինստիտուտի գլխավոր տնօրեն, Օսլո, Նորվեգիայի Թագավորություն*
- **Ռեգին Լիֆե Մայեր,** *Մշակութային ժառանգության հետազոտությունների նորվեգական ինստիտուտի միջնադարի հնագետ և վերականգնող մասնագետ, Օսլո, Նորվեգիայի Թագավորություն*

Հուշարձանների համաշխարհային հիմնադրամ

- **Մարկ Վեբեր,** *Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի դաշտային ծրագրերի տնօրեն, Նյու Յորք, Ամերիկայի Միացյալ Նահանգներ*
- **Սամանտա Էրլ,** *Հուշարձանների համաշխարհային հիմնադրամի ծրագրի ղեկավարի օգնական, Նյու Յորք, Ամերիկայի Միացյալ Նահանգներ*

«Անի» ծրագրի խորհրդատուներ

- **Յավուզ Օզկայա,** *վերականգնող-ճարտարապետ, Անկարա, Թուրքիայի Հանրապետություն*
- **Ստեֆեն Ջեյ Քելլի,** *ճարտարապետ-ինժեներ և «WJE Inc» ընկերության ղեկավար, Չիկագո, Ամերիկայի Միացյալ Նահանգներ*
- **Պրեդրագ Գավրիլովիչ,** *շինարարական ինժեներիայի մասնագետ, պատվավոր պրոֆեսոր, դոկտոր, Երկրաշարժերի ինժեներիայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտ, Սկոպյե, Մակեդոնիա*
- **Գիզեմ Դյորտեր,** *ճարտարապետության տեսաբան և մշակութային ժառանգության մասնագետ, Կոջ համալսարան, Ստամբուլ, Թուրքիայի Հանրապետություն*
- **Արմեն Ղազարյան,** *Ճարտարապետության տեսության և քաղաքային պլանավորման հետազոտական ինստիտուտի Հին և միջին դարերի ճարտարապետության բաժնի ղեկավար, դոկտոր, Ճարտարապետական և շինարարական գիտությունների ռուսական ակադեմիա, Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն*

Միջազգային փորձագետներ

- **Կարեն Մաթևոսյան,** *Անիի հարցերով մասնագետ-պատմաբան, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի բաժնի վարիչ, դոկտոր, Երևան, Հայաստանի Հանրապետություն*
- **Ֆելիքս Մարտիրոսով,** *Հին և վաղ միջնադարյան շրջանի հարցերով հնագետ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի դոկտոր, պրոֆեսոր, Երևան, Հայաստանի Հանրապետություն*
- **Դավիթ Քերթմենիջյան,** *Միջնադարյան ճարտարապետության, քաղաքային և եկեղեցական պլանավորման տեսաբան, Երևանի պետական համալսարանի դոկտոր, պրոֆեսոր, Երևան, Հայաստանի Հանրապետություն*
- **Աշոտ Մանասյան,** *վերականգնող-ճարտարապետ, Երևան, Հայաստանի Հանրապետություն*
- **Ալին Պոնտիոլոլու,** *վերականգնող-ճարտարապետ, Ստամբուլ, Թուրքիայի Հանրապետություն*
- **Քրիստինա Մարանչի,** *Թաֆթս համալսարանի արվեստի և արվեստի պատմության ֆակուլտետի գիտաշխատող, դոկտոր, Մեդֆորդ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ*
- **Ռեյչել Գոշգարիան,** *Լաֆայեթ քոլեջի պատմության ֆակուլտետի դոցենտ, դոկտոր, Փենսիլվանիա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ*
- **Ֆիլիպ Դանգլս,** *ճարտարապետ, Անիպեմզայի Ֆրանսիական հնագիտական խմբի անդամ, Ֆրանսիայի Հանրապետություն*
- **Գյորուն Արուն,** *Յիլդիզի տեխնիկական համալսարանի դոկտոր, պրոֆեսոր, Մշակույթի հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդում (ICOMOS) Թուրքիայի անդամ, Ստամբուլ, Թուրքիայի Հանրապետություն*

«Անադոլու կուլտուր»

- **Օսման Քավալա,** *«Անադոլու կուլտուր»-ի նախագահ, (ամփոփիչ նիստի մասնակից) Ստամբուլ, Թուրքիայի Հանրապետություն*

Անկարայում Նորվեգիայի Թագավորության դեսպանատուն

- **Լիզ Ալբրեխթսեն,** *Անկարայում Նորվեգիայի Թագավորության դեսպանատան առաջին քարտուղար, (6-րդ օրվա դաշտային գիտարշավի և 7-րդ օրվա ամփոփիչ նիստի մասնակից), Թուրքիայի Հանրապետություն*

Խմբագրումը և սրբագրումը՝ *Դավիթ Նահապետյան, Դավիթ Դավթյան*
Թարգմանությունը՝ *Դավիթ Խաչատուրյան*
Համակարգչային ձևավորումը՝ *Լէկտա Մէրմէր*

Երևան, 2018
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ

Այս նյութը թարգմանվել է հայերեն Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի շրջանակներում: Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները: Բովանդակությունը կարող է չհամընկնել Եվրոպական միության, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և ծրագրում ընդգրկված մյուս գործընկեր կազմակերպությունների տեսակետների հետ:



WORLD
MONUMENTS
FUND

350 Fifth Avenue, Suite 2412
New York, NY 10118
646-424-9594 • www.wmf.org